№ 8 (128) ԺԲ ՏԱՐԻ ՕԳՈՍՏՈՍ 1902

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԻ" ՕՐԳԱՆ

ՄԵՐ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԻՔՆԵՐԻՑ

II

Զերծ չէ խոշոր հարիքներից և մեր յեղափոխական ասպարէզը։

Անշուշտ մեծ է այդտեղ հայ ֆէդայու խազացած բարոյական և ռազմական դերը։ Հերքէզկան ու սև Լափունջին նոյ չի համարում՝ քառաջայ պէս հրացանից աւելի անհրաժեշտ պիտոյք, պատերազմ գնալիս նա շատ էլ չի մտածում, որ իր պատկերը տպագրի յեղափոխական թերթերի մէջ և ինքը վաստակի „հերոսի" տիտղոսը։

Զուրկ ամէն ինչից, երկրի խուլ անկիւնում ընկած, նա պատրաստ է ամէն օր, ամէն վայրկեան ենթարկուելու պատահականութիւններին, որպէս զի պաշտպանէ թշնամու թալանից ու աւերումներից՝ իրեն յանձնուած վայրը։ Իր կենդանի բողոքներով, իր մեռած անհաղորդաբար և յանդուգն կռիւներով նա յաճախ բարձրացրել է հայ կնոջ պատուասիրութեան զգացմունքը, զարթեցրել է հայ երիտասարդի պատերազմական ոգին և որոշ յարգանք ու նոյն իսկ վախ է ներշնչել թշնամուն։

Դժբախտաբար հայ կամաւորների գոյութեան շրջանում կան և սև գծերը, որ անկարելի է աչքից թողնել։ Վերջին տարիների ընթացքում հայ պարբերական մամուլը Սպրմաստից, Մուշից, Կարնից և այլ տեղերից հաղորդում էր երբեմն տխուր լուրեր՝ այդ շրջաններում ապրող „օտարականների", „դաշնակների" և „ֆէդայիների" մասին։

Մի տեղ բռնի կերպով հայ գիւղացուց փող են շորթում, միւս տեղ ձին խլում մի ալ խոնջ հայհոգով անպատուում են փաստերը տեղ տեղ ստացել են այնպիսի քաստմների ընդարձակութիւն, որ հայ „կամաւորների" և „անձնէրների" ճակատին հայ ժողովուրդը կպցրել է „ենիչերի" անունը։

Երբ կոտորածից փախած և ամէն ինչ կորցրած հայ պանդուխտը ամիսների ու տարիների ընթացքում խոյս է տալիս ազնիւաշունչ տանջանքից՝ դերադասելով մուրացկանութիւնը—դա բացատրում է նրա յուսահատութեամբ և սգով, որ բնականաբար թուլացնում է մարդուս կորովը ու մատնում ստրան մեղկութեան։ Երբ Անգլիա, Գրանսիա ընկած և բարոյական հարստութիւնից զուրկ հայ մանրավաճառը իր ստահակութեամբ, խարէութեամբ հիասթափեցնում է երկրայ հայաստրին—մեզ տրամադիր ենք այդ բացատրել օտար, շաղնող պայմաններով, ուր նորեկը հեշտութեամբ գայթակղում է և դիմում ծուռ ճանապարհների։

Բայց ի՞նչով բացատրել հայ կամաւորների քրստոնեական արարքները, ի՞նչ արդարացուցիչ բացատրութիւն տալ նրանց կատարած „ենիչերական" գործողութիւններին, ի՞նչ ասել այն ամենատարբերական բարոյական սկզբունքները դաւաճանողներին, որոնք ընդհանուր գործի անունով քողարկում են իրենց կեղտոտութիւնները, կանգ չառնելով նոյն փոքր կեղծ դրդմամ կարելի՞ է։

Պատասխանը կարող է միայն մէկը լինել—դուրս վանել այդ սիկիանէրին հայ շրջանից, վարուել նրանց հետ այնպէս, ինչպէս վարուելու է իսկական ենիչերիների հետ, ինչպէս վարուում են յեղափոխական մարմինները մեր ազգային դատին դաւաճանողների հետ։

Ա՞ռ միթէ կարող է այլ կերպ լինել։

Հայ յեղափոխականները չեն նեռաջացել անձնական շահից դրդուած կամ թէ այս կամ այն կողմնակի դիտումներով։ Չի եղել այստեղ և ածուարական հաշիւ։ Ընդհակառակ իրենք նպատակ հայ ժողովրդի վերածնութիւնն ամենալայն մասով՝ յեղափոխականները նշանակուած են ընտրել անձնուիրութիւնը և հայ ժողովրդին ծառայելը՝ իրենց ձեռքի տակ գտնուած բոլոր միջոցներով։ Երբ հանկարծակի սրանք „հայ կամաւորը" տարին միներկու անգամ հրացան վերցնելով, ամիսներով պարապ նստած՝ սպասում է հայ գիւղացու խրիւն-քրտինքով վաստակած փողը—նա դադարում է յեղափոխական լինելուց, նա դառնում է հասարակ վարձկան և դաւաճանում յեղափոխականի բարձր կոչմանը։ Երբ „ազգի շահերի" անունով քողարկուած ՀՌՊ-ները խոյս է տալիս անկատարութիւնից և դիւրին, բայց կեղտոտ միջոցներով վարում է ապահով կեանք—նա ցեղասպանում է „հայի" պատիւը, նա հանդիսանում է հայ յեղափոխականի ոսկերիչ թշնամի։ Շատ որ ֆէդայիներ հայրենի նոյնքան թանկ է հայ ժողովրդի հասարակական պատիւը, որքան և հայ կանանց ու կոյսերի ծանձռնմանելի լինելը։ Հայ ժողովրդին ճնշող և հայ յեղափոխականի բարոյական վարկը ձգող „հայ ենիչերիները" և դիմաչագող յեղափոխականները նոյնքան մեր թշնամին են, որքան և նոյն ժողովրդին բռնաբարող խաներն ու քրդերը։ Նրանց դէմ կռուելը նոյնչափ ֆէդայու պարտքն է, որչափ և

հայ գիւղացու պաշտպանութիւնը թալանչիների և մարդասպանների յարձակումների դէմ։

Հ. Յ. Դաշնակցութեան մարմիններից շատերը կուռած են այս չարիքների դէմ՝ պատժած են անարժաններին, արտաքսած են կազմակերպութիւնից, ծայրայեղ դէպքում դիմած են նոյն իսկ մահուան պատժի։

Սակայն դա բաւական չէ։

Յեղափոխական մաքուր մթնոլորտը սեւացնող յանցաւորներից շատերը ազատւում են „Դաշնակցութեան“ հսկողութիւնից, յայտարարելով իրենց՝ այլ կուսակցութիւնների անդամ, նոյն իսկ դուրս՝ գոյութիւն ունեցող կազմակերպութիւններից։ Այն ինչ՝ նրանց կատարած յանցանքները անդրադառնում են բոլորի վրայ, կողմնակի կերպով ազդում են նաև դաշնակցական շրջանների վրայ։

Չարիքը ընդհանուր է. նրա դէմ կուելու է ընդհանուր ուժերով, առանց խտրութեան կուսակցական բաժանումների։

III

Դժբախտաբար, պատով չեն սպառւում մեր ներքին չարիքները։

Ինչպէս որ լեգալ հասարակական ասպարիզի վրայ փայլում են դեռ ևս շատ „գործիչներ“, որոնց ամբողջ գործունէութիւնը „թոզ փչելու“, իրենց անձը հռչակելու մէջն է կայանում, այնպէս էլ յեղափոխական ասպարէզում դեռ ևս շարունակում են գոյութիւն պահպանել մարդիկ և նոյն իսկ մարմիններ, որոնց գործունէութիւնը մեծ մասամբ կայանում է վարչութեան, անդամների ապրուստը հոգալու և „սեփական“ օրգան հրատարակելու մէջ։ Լոկ դեր խաղալու տենչը, անձնապաստանութիւնը, անհատական ձգտումները այնքան խոր արմատներ են ձգել հայերիս մէջ, որ, չնայած ընդհանուր ցանկութեան, մինչև օրս անկարելի է եղած ի մի գումարել բոլոր հայ յեղափոխական ուժերը։ Հէնց ասպարէզից հեռանում է մի մարմին, կամ միանում է միւսի հետ՝ առաջ էգալիս մի ուրիշը, քողարկելով իր գոյութիւնը այս կամ այն մասնակի նպատակով՝ զէնք մատակարարելով, պրոպագանդ անելով ևն—կարծես թէ նոյն ինդիրներով չէն զբաղւում արդէն գոյութիւն ունեցող կուսակցութիւնները։ Մեր հասարակութիւնը այնքան խակ է դեռ ևս, որ տարբերութիւն չի դնում ճոռոմաբանողների և իսկական գործիչ-աշխատողների մէջ, նա սորված չէ դեռ ևս տալ խօսքին միայն այնքան արժէք, որքան նրա հետ կապած է գործ։ Նոյն տհասութեամբ է բացատրւում՝ և այն ծայրայեղ, ազանդական անհամբերողութիւնը, որ նկատւում է մեր յեղափոխականների շրջաններում։

Օրինակ առնելով, կարծես, միջնադարեան անվերջ կրօնական վէճերը, երբ ամէն մի դաւանանք „ուղղափառ“ էր համարում իր սկզբունքները և „հերձւած“ բոլոր մնացածները՝ մեկ մի կարգ անձկամիտ յեղափոխականները գերադասում են „թիւրք դառնալ“ կամ խպոտ հրաժարուել ասպարէզից, քան թէ գործել համերաշխօրէն ուրիշ այլ հայ կուսակցութեան հետ։

Մոռանալով բոլոր հայ յեղափոխականների ընդհանուր նպատակն ու շահը, յեղափոխականներից շատերը իրար օգնելու տեղ փորում են միմեանց ոտքերի տակ, կանգ չեն առնում մինչև իսկ բացարձակ թշնամութեան և մատնութեան խառնուելու։ Ուրիշ ևս. հայերիս մէջ սակաւ չեն և այնպիսի դէպքեր, երբ միևնոյն կուսակցութեան մարմիններ և մինչև իսկ միևնոյն մարմնի ընկերներ, այս կամ այն գործնական կէտին վերաբերեալ հայեացքների տարբերութեան պատճառով, կամ աւելի ևս վատ՝ այդ տեսակ տարբերութեամբ քողարկելով նեղ անձնական հակակրութիւնները—թշնամանում են միմեանց հետ և պատճառ դառնում ներքին թունաւորութիւնների։

Եւ մարմինները և՛ անհատները մոռանում են, որ յեղափոխական գործի առաջադիմութեան համար անհրաժեշտ չէ բոլորովին միատեսակ հայեացքների գոյութիւնը բոլոր գործնական ինդիրների մէջ։ Ընդհակառակը, մեր գործունէութեան պայմանները այնքան բազմակողմանի են, որ միակերպ գործունէութիւնը ամէն վայրում և բոլոր պայմաններում կարող է նոյն իսկ համարուել յեղափոխական մտքի մեռելութեան նշան, կամ արդիւնք վերացական հողի վրայ հիմնւած որոշումների։ Համամիտ լինելով միմեանց հետ ընդհանուր ուղղութեան վերաբերմամբ, ընդունելով մեծամասնութեան կողմից տրւած որոշումների անհրաժեշտութիւնը, բոլոր հայ յեղափոխական ուժերը օգնելու են իրար՝ առանց բռնանալու իրար վրայ, առանց ճնշելու տեղական մարմինների և նոյն իսկ անհատների ինքնուրոյնութիւնը։ Յեղափոխականներին լծածներ չեն ոչ իւրաքանչիւրի դաւանած փիլիսոփայական հայեացքների տարբերութիւնները, ոչ այլևայլ կուսակցութիւններին և խմբակներին պատկանելը։ Մեր ընդհանուր շահի տեսակէտից աւելի լաւ է օգնել թէկուզ „սխալ“ գործողին, բայց ազնիւ և նուիրւած յեղափոխականին և ներողամիտ գտնւել դէպի անհատի ակամայ կատարած սխալները, քան թէ անվերջ վիճաբանութիւններով ու քննադատութիւններով չեզոքացնել միմեանց ուժերը և խախուտ երարխիական վարչութեան կրզբուռներին ենթարկել խմբական ոգեւորութեան և պատասխանատուութեան թանկագին տարրերութիւնները։

Այլ կերպ անկարելի է ի մի գումարել բոլոր հայ յեղափոխականներին, անկարելի է մտցնել հայ յեղափոխական շրջաններում բարոյականութեան և դիսցիպլինի այն տարրական հիմքերը, առանց որոնց չէ կարող գոյութիւն ունենալ ոչ մի յեղափոխական մարմին։

Այն վէճ, բայց մա ծանր գատի պաշտպանութիւնը, որ սկսած է հայ ժողովրդի լաւագոյն մասը պաշտպանում է ուժ՝ նոյնքան ֆիզիքական, որքան և բարոյական։

Միջակ կրթութեան և ընդունակութեան տէր, բայց ազնիւ ու համեստ գործիչները միշտ աւելի մեծ գործ են կատարել, քան իրենցից աւելի ընդունակ և կրթ-

ուածները, երբ վերջիններս „խարութիւն“ չեն դրել միջոցների մէջ, ցոյց աջողութեան համար դիմել են „թոզ փչելու“ ճանապարհին, գործ են դրել „ծուռ ու մուռ“ միջոցներ։

Փոքրիկ, մի քանի հոգի անձնուէր, ընկերասէր և դիսցիպլինի ենթարկուող զինուորներից կազմուած խմբակները աւելի աջողութիւն են ունեցած, քան տասնապատիկ աւելի մեծ մարմիններ, կազմուած կիսայուսալի, կիսավարժ և նախանձոտ անդամներից։

Քանի մեն քիչ ենք թուով, քանի թոյլ է մեր ֆիզիքականը, աւելի ևս բարձր պիտի լինի մեր բարոյականը, ասուր՝ մեր ընկերական կապը, խիստ՝ մեր դիսցիպլինը։ Այդպիսով մենք կ՚ուժեղանանք ներքուստ, կրստուարացնենք մեր բարեկամների թիւը, կը չէզոքացնենք մեր թշնամու դիմադրութիւնը։ Չէ որ հէնց այսօր էլ մեր ամենամեծ ուժը ֆէդայու բարձր ու մաքուր կոչման և մեր պահանջների արդարութեան մէջն է։ Այսօր Եւրոպայի լուսաղոյն մասը պաշտպանում է հայկական դատը, որովհետև նա դատ է առաջադիմութեան և մարդկայնութեան։ Այսօր մեր թշնամիներից շատերը)արգում ու երդում են „ֆէդայիներին“՝ ինքնց ցոյց տուած արտակարգ քաջութեան և անձնուիրութեան համար։

Մեր ուժը նոյնքան հայ ժողովուրդը պաշտպանող կամաւորների ու զէնքի մէջ պէտք է փնտրել, որքան և յեղափոխականների ազնուութեան, արիութեան, դիսցիպլինի մէջ։

Որակը նոյնքան կարևոր է մեզ համար, որքան և քանակը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՕՆՏԵՆԵԳՐՕՆ

(ԶԷԹՈՒՆԻ ՇԱՐԺՄԱՆ 40-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ)

Որքա՜ն սփոփիչ են վերյուշումները դիւցազնական անցեալից... Այնտեղ դուք անհատ սնունդ էք գտնում ազգային հպարտութեան ձեր զգացումին։ Այնտեղ գտնում էք խրախոյս ձեր ապագայ գործունէութեան համար։

Ուղիղ քառասուն տարի է գլորւել... Հայը նոր-նոր սկսում էր ճանաչուել Եւրոպայից։ Ցաւ ու ցրիւ վաճառականների մի ժողովուրդ էր նա—ասում է Լանգլուա—վաճառականներ, որոնք իսպառ անտարբեր էին դէպի ժամանակակից ազգայնական ու քաղաքական ինդիրները և որոնց համար գոյութիւն ունէր եսական շահի դաւանանքը միայն։

Կամաց-կամաց իր ստեղծագործող կորովով, իր մտաւոր քաղաքացիական նուաճումներով՝ „վաճառական ժողովուրդը“ յայտնի եղաւ քաղաքակրթութեան։ Ցայտնեց, որ դա երեք միլիոնաւոր մի համայնք է, մի նշանաւոր կուլտուրական ուժ, կղզեացած տաճկական աշխարհում, քրիստոնեայի՝ հպնդէպ մահմէդականների, ինտելիգենտ ու ազատամիտ՝ հանդէպ բարբարոսների։

Ազգային սահմանադրութիւն, մասուլ ու դպրոցներ, ազգային այլևայլ հիմնարկութիւններ—մի ճշմարիտ վերածնութեան շրջան էր դա, որ կատարեալ անախորժիմ է թւում թիւրքահայոց կճանքում, երբ դիտում էք նրա ներկան...

Այդ ամէնը անհրաժեշտ էր, բայց դեռ բաւական չէր... Բաւական չէր՝ անուն վաստակելու, յարգանք ներշնչելու լուսաւոր մարդկութեան մէջ։ Մի մոռացէք, որ 60-ական թւականներն էին դրանք, երբ գոյութեան կուսի վարդապետութիւնը բրիտանական հանճարի բերանով նոր ծանուցել էր նշխարհին իր դժնդակ ճշմարտութիւնները...

Այն թւականներն էին, երբ նոյնիսկ քաղաքակրթութեան ծոցում պատրաստւում էին գոռ փոթորիկներ, երբ ատրուկ ազգային զանգուածները սպառազինւում էին իրենց կեղեքիչների դէմ, ձգտելով նուաճել ազատ ու անկախ կեանքի իրաւունք։

Կուռել էր պէտք՝ սեփական գոյութիւնը ամուր շեշտելու համար։ Բաւական չէր քաղաքացիական առաքինութիւնը, պահանջւում էին նաև զինուորական առաքինութիւններ։ Այդ ժամանակն էր ահա, որ Տավրոսի գագաթներից հնչեց ռազմական շեփորը։ Հազարաւոր արձագանքներով շառաչեց նա ամբողջ հայ աշխարհում, որը երկար դարերից իվեր առաջին անգամն էր զգում ախորժելի, մարտական սարսուռ։ Իսկ Եւրոպան՝ ուշադրութիւնը մի պահ դէպի Արևելք ուղղած՝ հիացումով սկսեց խօսել „Հայկական Մօնտենեգրոյի“ մասին, որը լեռնային անառիկ բարձունքներին փայլուն յաղթութիւններ էր տանում տաճկական ստուար բանակի վրայ...

Զէյթունն էր նրա գնո

։ Մինչ այն՝ համեստ ու գրեթէ աննշան մի անուն, թէև նրա հետ կապուած էր մի ուշագրաւ և դարաւոր դիւցազներգութիւն։ „Հայկական դաշնակցութիւնը“ վաղուց գոյութիւն ունէր և վաղուց տովորել էր անարգ տաճկի դէմ զէնքով պաշտպանել իր թանկագին աղատութիւնը։

Հայկական անկախ իշխանութիւն՝ կիպրոսնի տիրապետութեան տակ... դա ըմբոստացուցիչ սրբապղծութիւն էր, և թիւրքն վաղուց վճռել էր հիմնայատակ անել այն։

Որքան ցնցող, այնքան և հրահանգիչ է պատմական այն մեծ փոթորիկը, որ անցաւ Զէյթունի վրայից 1862-ի օգոստոսին։ Այսօր հայ յեղափոխական կազմակերպութիւնը գրեթէ ապարդիւն ջանքեր է թափում՝ համոզելու մի կարգ թուլամիտ հայրենակիցներին, որ կազմակերպած ջարդի սիստէմը Տաճկաստանի մէջ պատահական մի երևոյթ չէ, առանձին էլ զուտ յեղափոխական շարժումների ծնունդ, այլ որ նա ֆատալ, նախամտածած մի ուղղութիւն է, որ նպատակ ունի ոչնչացնել հայութիւնը,—ոչնչացնել հէնց այն պատճառով, որ այդ ժողովուրդը ցոյց է տալիս քաղաքակրթութեան, առաջադիմութեան նշաններ, ոչնչացնել հէնց այն պատճառով, որ այդ ժողովուրդը գրկած է եւրոպական Միութեան տակ և շարունակաբար կոչ է անում Եւրոպային։

Բայց արի՛ տես որ Զէյթունի դէպքում եւրոպական հովանաւորութեան ու միջամտութեան խնդիր անգամ չկար, և սակայն տաճկութիւնը այնտեղ ևս վաղուց իվեր կիրառում էր միևնոյն մեթոդը, միևնոյն բնաջնջման սիստէմը։ Բաւական է յիշել միայն այն նշանակալից խօսքերը մի նամակից, որ 1862-ին Պոլսի կենտրոնական իշխանութիւնը ուղղել էր մի փաշայի և որ քաղուածաբար առաջ է բերում Վ. Լանգլուա Revue des Deux Mondes-ի 1863 թվի մի գրքում։ „Պէտք է, ասուած է այդ նա-

մակի մէջ, խրախուսել ազգայնական-կրօնական կռիւները քրիստոնեաների մէջ, ընդհարումներ առաջացնել և ապա միջամտել, զինուած ուժով"...

Պատրուակների մէջ խտրութիւն չէր դրուում։ Քրիստոնէաներին ջնջել պէտք էր և դրա համար ամէն միջոց ներելի էր...

Զէյթունը ջնջելու համար հնարուած պատրեպկը շինծու էր, ողորմելի։ Ընթերցողը կը գտնէ այն ծեր Ակաշատեսի հակիրճ պատմուածի մէջ։

Որպիսի՜ մոլեգին խանդավառութիւն էր տիրում Մարաշի ու շրջակայքի մահմեդականների մէջ 1862-ի օգոստոսի սկզբում... Ազիզ փաշան մէջլիս էր գումարել և Զէյթունի դէմ միաձայն տուել էր բնաջնջման դատավճիռը։ Ամբողջ նահանգը ալեկոծուած էր։ Իմամները սրբազան կռիւ էին քարոզում գեաւուրների դէմ։ Տաճիկները դրօշակներով ու երգերով արշաւում էին աջ ու ձախ. քրիստոնեաները—հայեր ու յոյներ—անհնարին սարսափի մէջ էին։ Սպասւում էր Նոյնպիսի մի փոթորիկ, որպիսին պայթեր էր երկու տարի առաջ Լիբանանի վրայ։

Զէյթունը անհանգիստ էր։ ՀասկՀ էր արդեօք հասական ժամը, օսմանեան կառավարութիւնից վազուց փայփայուած բոպէն, երբ հայ արծիւների դաշաւոր բունը պիտի քայքայուէր, երբ ջրդ մի բուռն հայ դիւցազուները, որոնք տարիների ընթացքում արհամարհել էին ամէն տեսակ փորձութիւններ, պիտի ջքանային ընդմիշտ աշխարհի երեսից...

Անհանգիստ, բայց և պաղարիւն, իրենց արժանաւորութեան հպարտ գիտակցութեամբ՝ հայ լեռնականները պատրաստւում էին պատուով դիմաւորելու անցքերին։ Զինուեցին բոլոր զէնք կրելու ընդունակները—աղամարդիկ, կանայք. նոյնիսկ պատանիները։ Նախ սպառեցին նրանք խաղաղ միջոցները։ Պատրաստեցին մի մանրամասն արձանագրութիւն եղած փաստերի և ցուցադրեցին Ազիզ փաշային, հաւատացնելով որ իրենք զէյթունցիք երբէք նախայարձակ չեն եղել։ Ազիզ փաշան և իր մէջլիսը աւելի կատաղեցին. նրանք հրաւիրեցին Զէյթունի իշխաններին՝ անձամբ գալ Մարաշ ու բացատրութիւն տալ։ Զէյթունցիք իրենց սովորական հոտնգութեամբ հասկացան, որ դաւ կայ։ Նախ քան Մարաշ ուղևորուիլը՝ նրանք նամակով դիմեցին Քրանսիական հիւպատոսին, որպէս միջամտէր ու իրենց ապահովութեան համար երաշխաւորութիւն ձեռք բերէր։ Հիւպատոսի միջամտութիւնը ապարդիւն եղաւ։ Ազիզ փաշան որոշել էր, ինչպէս ինքն էր ասում, «կոտորել ապստամբ գեաւուրներին մինչև վերջին մարդը»։

Պոլսից ստացած հրահանգի համեմատ փաշան արդէն զօրք էր ուղարկել դէպի Զէյթուն։ Զօրքը գիշերով մտնում է Աշաբաշ գիւղը և տմարդի կերպով յարձակում գործում հայերի վրայ. 44 տունտաբերում են, թալանւում, դիմադրողները անխնայ կոտորւում։ Օգոստոս 7-ին Ազիզ փաշան հազարաւոր արիւնարբու քաշիբոզուկների գլուխ անցած՝ անձամբ արշաւեց դէպի Զէյթունի սահմանները։ Նա արդէն փայփայում էր մօտալուտ յաղթութեան անուշ երազները, իր սգանալիք դափնիայ պակները։

Գնում էր փաշան, ազատ, անարգել անցնում էր Զէյթունի հողերով. զէյթունցիք փախչում էին նրան տեսնելով, յետ էին նահանջում, ապանց մի գնդակ արձակելու։ Ազիզ փաշան կէս-հերոս էր արդէն. քիչ ևս առաջ և հպարտ լեռնցին պիտի անձնատուր լինէր պիտի ճկէր իր պարկեշտը...

„Սպասի՜ր, շուն. քեզ պէս շատերն են դափնիներ փնտրել Զէյթունի լեռներում. սպասի՜ր, ուրախութիւնդ վաղաժամ է"... Այսպէս էին յոխորտում հայկական բանակի մէջտեղ կազմակերպուած մաս-մաս դասաւորուած էր Զէյթունի ժայռերում։

Եւ իրօք, Ազիզ փաշային սպասում էր մի ահեղ անակնկալ՝ բուն Զէյթուն քաղաքի մէջ. նա զգաց վերջապէս, որ զէյթունցիների կանոնաւոր նահանջը ռազմագիտական մի խորհուրդ ունէր։ Նա մտնում էր Զէյթունին, բայց անվստահ, դողալով։ Նա սկսել էր արդէն բանակցել զէյթունցիների հետ, երբ նրան յայտնեցին, որ Մարաշից գալիս են օժանդակ զօրքեր։ Դարձեալ չէրքէզներ ու բաշիբոզուկներ՝ պրեան ու աւարի ծարաւ։ Նշանք երևում էին չվերադարձեալ առանց կոտորածի և կողոպուտի։ Պատերազմը հրամայական պահանջ էր. Ազիզ փաշան խզեց սկսուած բանակցութիւնը և առաջ գնաց։ Հասաւ Զէյթուն։ Կռիւը պայթեց։ Զէյթունցիք իրենց անմատչելի դիրքերից մի առ ժամանակ գնդակներ տեղացին — շեշտակի գնդակների մի կատաղեալ տարափ։ Այդպէս շարունակեցին նրանք, մինչև թշնամին բեզարեց, ուժասպառ եղաւ։ Այն ժամանակ լսեց յանկարծ հայերի կողմից մի որոտում, զանգակները զողանջեցին — պայմանական ազդանշան էր դա, որի վրայ զէյթունցիք ամբողջ բանակով, կայծակի արագութեամբ գահավիժեցին դէպի թշնամին։ Սոսկալի ինարանցում։ Զէյթունցիք սկսեցին մի զարհուրելի կոտորած։ Չէրքէզները հարիւրներով ընկան, ծածկեցին արևելեան ձորը, որը այնուհետև կոչուեց Կոտորածի ձոր (Գրգըն դերեսի)։

Երբ երկիւղն ու յուսահատութիւնը պաշարել էին թշնամուն, յանկարծ ասես երկնքից իջաւ մի նոր բանակ — հայկական պահեստի բանակը, որ ցած սլանալով՝ մի ակնթարթում գրաւեց թշնամու թնդանօթները։ Լքումը կատարեալ էր. ամէն կողմից բաշիբոզուկները վայրենի ճիչեր արձակելով՝ զարգանդած փախչում էին հայ լեռնականի առաջ, որը սուրը ձեռին անողորմ կերպով հալածում էր նրանց։ Փախչում էին ու այլևս չէին լսում հրամայական ձայները, ցաւ մերթ հրամայում, մերթ աղերսում էր նրանց կանգ առնել։ Վերջապէս զօրապետը ինքն ևս փախաւ ամօթաբեր իսպառ ոչնչացած. փախաւ առանց յետ նայելու, թողնելով ամէն ինչ զէյթունցիների ձեռքը։ Հերոսութեան գոռոզ թեկնածուն դափնիներ վաստակելու տեղ... անմիջապէս պաշտօնանկ եղաւ։

Քառասուն տարի է անցել այն պանծալի օրերից և դեռ կանգուն է Հայկական Մօնտենեգրոն իր ռազմա-կան-բարոյական կերպարանքով, իբ ամբողջ պատմական մեծութեամբ։ Չը նայած ահռելի փոթորիկներին, որոնք քանի քանի անգամ պայթեցին նրա գլխին քառասուն տարուայ ժամանակամիջոցում՝ նա դեռ ընդունակ է շատ ու շատ անգամ ցոցաւաուել որպէս մի հրաբուխ, նա դեռ ընդունակ է անսովոր ջերմութիւն հաղորդել ամբողջ հայ աշխարհին։

ԱԶԻԶ ՓԱՇԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(ԱԿԱՆԱՏԵՍԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԸՆ)

1862 յունիս 10. Արեգին գիւղէն Վարդանեան Յակոբ Քեհեան սպաննեցաւ Գերթման տաճիկ գիւղի Իպիշի ձեռօք. սպաննուածի մարմինը ամփոփուեցաւ Ս. Փրկչի վանքի գերեզմաննոցը. տեսարանը շատ սրտաճմլիկ էր, բոլոր գիւղացիք լաց ու աղաղակ կը բարձրացնէին։ Նոյն գիշերը ատոր վրէժը լուծուեցաւ։ Ննջեցեալին աներ-ձագ Կարապետ Քեհեան 70 մարդով արշաւեց Գերթման գիւղը և մէկի տեղ 14 մարդ սպաննեց. Ազիզ փաշայի պատերազմի հրատարակման պատճառը այս էր։ Ազիզ փաշան զայրացած՝ 12 հազար պաշիպօզուքներով իր բանակատեղին հաստատեց Ճահան գետի ափանց վրայ, որուն դէմ զէյթունցիք միայն 500 մարդ ղրկեցին. երկու թշնամի գունդերը կանգնած էին դէմ առ դէմ գետի ափերուն վրայ, մինչդեռ Ազիզ փաշայի գունդը գիշերայն, 5 ժամ հեռաւորութեան վրայ գետէն անցնելով եկաւ պաշարեց զէյթունցոց դիրքերը. այս կուին մէջ թիւրքերը 200 մարդ կորսնցուցին, մինչդեռ զէյթունցիք միայն 72 կտրիճներ, իսկ այդ 72 կտրիճներու նահատակութեան վրէժը լուծուեցաւ մօտ 2,000 թիւրքերու սատակումովը։ Պատերազմի մէջ մէկ քանի հետաքրքիր իրականութիւններ կան. անոնք կ'ուզեմ բացատրել։ Մին այն է, որ էրքէզները իրենց հետ յենարաններ բերած էին հրացանը վրան դնելով նշան առնելու համար, մինչդեռ զէյթունցիք արդէն նշանառութեան մէջ վարժ՝ զանոնք մին և իրենց նշանաձգութեան պատրաստիլը գետին կը տապալէին։ Երկրորդ՝ չնայելով Ազիզ փաշայի գոռում գոչումներուն, երբ թնդանօթաձիգին իր ոտքերուն տակ տապալիլը տեսաւ, քալելու անգամ անկարող, ստիպուեցաւ ուրիշի մը ուսերուն վրայ փախչիլ պատերազմի դաշտէն։ Ուրիշ դէպք մը. թիւրք զինուորներ փախչելու ատեն Սաղբը լեռան ձորերուն աւազներուն մէջ կը պահուէին, սակայն զէյթունցոց կողմէ գտնուելով կամ կըսպաննուէին կամ իրենց կեանքը կը շնորհուէր. դժբախտաբար մէկը, որ ընկուզի ծառի մը վրայ բարձրացած էր, զինեալ զէյթունցիներու երևումէն վախէն միզեց, որով զէյթունցիներու ուշադրութիւնը իր վրայ հրաւիրելով վայրկենաբար գնդակահար ծառէն վար ընկաւ։ Վերջին միջադէպ մը. թիւրք բանակի Դրօշակակիր էրքէզ մարդի, Զօր-Ալի անուն դարբին մը ութսուն տարեկան, դրօշակ ի ձեռին Զէյթուն կ'աճապարէր տեղացի 12 տարեկան օրիորդ մը բռնաբարելու նպատակաւ, սակայն էրքէզը իր փափագին չհասած վանքին պատը գամէն արձակուած գնդակի մը զոհ եղաւ։ Ըստ Զէյթունի պատերազմական օրինաց, միայն անոնք ֆրաւունք կըստանան զոհին ունեցածը գրաւելու, որոնք զայն սպաննած են, ըստ որմէ Կիլիկեան Նազարէթ (որուն պատկերը տպուած է „Զէյթունի անցեալէն ու ներկայէն" գրքի Ա. մասին մէջ), դրօշակակրի հագուստները գրաւած ատենը, ոսկիայ տուփ մը նշմարեց, որուն վրայ Զէյթունի տաճկաց իմամ Մօլլա Մուսթաֆան հետևեալ տողերը կարդաց. „Իբի ճիհան սերվերի Մուհամէտ էլ Մուստաֆա բէյղամպէրի զիշան հազարաթրընըն սագալը շէրիֆինին միւպարէք թիւլլերինտէն պու ալթուն գապ տերունինտէ հըքիզ օլունմըշ տըր։ Հէր գանկը մահալէ կիւթիւրիլիր իսկ, անտէ միճերրէթ միճիւզէ հասրլ սլըր" (երկու աշխարհներու պետ, Աստուծոյ ընտրեալ Մուհամմէտ մեծափառ մարգարէի սրբազան մօրուքին նուիրական մազերէն քանի մը հատ այս ոսկիէ տուփին մէջ պահուած են։ Ուր որ տարուի, հոն Ճնպատճառ հրաշքներ տեղի կ'ունենան)։ Մօլլա Մուսթաֆան Վերք տուփը ձեռքն առաւ, աչքերը լեցուեցան և գլուխը շարժելով դառնօրէն ըսաւ զէյթունցիներուն. „եթէ արդարութիւնը մահմէդականներուն կողմը ըլլար, այս նուիրական տուփը գերի չէր իրնար"։

Այդ տաճկական նուիրական տուփը Զէյթունի հիւսիսային արևմտեան կողմը 10 ժամ հեռաւորութեան վրայ Փնտրգ անուն չէրքէզի գիւղին մէջ բնակող հարուստ Խօջայի Շամիլ էֆէնտիին ծախուեցաւ 100 օսմ. ոսկւոյ և արծաթապատ դաշոյնի փոխարէն։

Վերջին մեծ յարձակման ատեն բանակը, որ ի սկզբան 12,000 մարդէ կը բաղկանար, 40,000 բարձրացաւ, այս ահեղ պարտութենէն յետոյ, որ 1862 օգ. 2 (Հ. տ.) առաւօտեան ժամը 6-ին (ը. թ.) տեղի ունեցաւ, հազիւ հազ կարողացան Մարաշ ապաստանիլ, 12 ժամուան ճամբան 6 ժամէն կտրելով։ Մարաշու մէջ սպաննուած էրքէզներու կիները փաշան իր պալատի մէջ քարկոծեցին իրենց երիկները պահանջելով, իսկ թիւրք հասարակութիւնը հայերուն տունները ապաստանեցան, հայ ձևանալով, որպէս զի զէյթունցոց ենթադրական արշաւանքի մը ատեն դէպի Մարաշ իրենց կեանքը ապահովի...

ԱԿԱՆԱՏԵՍ

ՀԵՐՈՍՆԵՐԸ

Հին հերոսներն ինչպէս մեռնող արևներ
Անհետացան հորիզոնից ռազմական
Կուի դաշտում մի պահ տիրեց սև գիշեր,
Ապատութիւն ու Իրաւունք նուագ հագան։
Զը վհատինք, վառ արշալոյս հայկական
Բիւր, երփներանգ արևներով կը ծագի.
Նոցա համար այնքա՞ն արև մայր մտան,
Որ զարդարեն մեր Մեծ այգը նոր կեանքի։
Եւ յարգարեն ծիրանիով շողշողուն
Լոյս Առագաստն Երրորդութեան ճշմարիտ,
— Ազատութեան, Իրաւունքի և Սիրոյ,
Որոնք տըւին մեզ ազատ կեանք ու տաք սիրտ։

ՎՏԱՐԱՆԴԻ

7 մայիս 1902

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆՆԵՐԻՆ ՀՌԱՔԱՂ

1901 ԴԵԿՏ. 1 ԱՄՍԱԹԻՒ ՏԵՂԵԿԱԳՐԷՆ — Մէկէ մեծելի նամակներով թշուառ ժողովրդին բազմազան տուրք-պարտքերը ստորաբաժնեալ, հը բացատրած էի։

1) Պետական տուրքերը, ներկայ տարուան Վանճիշտ և անպարտար տուրքը և անցեալ տարիներու բարդուած պարտքը Յոպ իմաստին։

2) Ծանրածանր տոկոսներով աճող անհատական պարտքերը, որոնց % 75 դարձեալ կառավարական տուրքերուն հանելու համար կ'ընէ ժողովուրդը։—Ներկայիս կուզեմ աւելի մանրամասն բացատրել այդ երկ-

ազգիւ բայց միևնոյն տուրքին կամ պարտքին ինչպէս գոյանալն ու հետզհետէ ծանրանալն։

Ա) Կառավարական տուրքին պ ա գ ը ե ա ն ք ը ն կը գոյանան նախ ն ա գ ը լ խ ա ն ե կամ իրենց գիւղերէն փախչողներու տուրքէն, որ տարուէ տարի գիւղը մնացողներու վրայ կը ծանրանայ, ինչպէս և երկրագործներու վրայ յանիրաւի դրուած թ է մ է դ ա ւ ի տուրքէն։ Եւ տեղական կառավարութիւնը ըստ օրինի և իրատէի ս է ն ի է յ ի՝ երբէք չ՝ընդունիր հիմարէթ ընողները և չբարեհաճիր շրջել անոնց անուններն ու պարտքերն արձանագրութենէն, ինչպէս և երկրագործներու թ է մ է դ ո յ ը և շատ անգամ մեռնողներն ալ և այսօր գրեթէ 10, 20, 30 տարի առաջուան արձանագրութեան համեմատ մ ա զ պ ա թ ա ն ե ր կը հանէ և տուրք կը պահանջէ պնդերունջ ժողովրդէն. մինչդեռ 10, 20 տարի առաջ 100-80-60-50 տունէ բաղկացած գիւղերը՝ այսօր հազիւ 50-30-10-5 ոյուն մնացած են։ Միւսները զբրկանքէ, հարստահարութենէ և կարօտութենէ ու անպահովութենէ ձանձրացած, թողած փախած են։

Բ) Տուրքերու գանձումի (թ՝ախսիլաթ) մէջ տեղի ունեցած զեղծումներէ յառաջ կուգայ պ ա գ ը յ ե ա ն. նախ ոչ գիւղ ու մ ա զ պ ա թ ա ն ե ր ը մեծաւ մասամբ ռ է ի ս կամ ք հ է ա ն ե ր ո ւ չի յանձնիր, այլ կը մնայ կառավարութեան քով և օրը օրին ամէն գանձում նոյնութեամբ և ճշդութեամբ չարձանագրիր և արձանագրուածն ալ ըստ կամս երկրորդական ու չորրորդական մանր մունր տուրքերու սիւնակին մէջ (մ՝արիֆ, իսթիքամ, թէճՀիզատ և այլն) և միշտ բաց կը թողուն զինուորական և այլ կարևոր տուրքերու սիւնակները։ Երկրորդ որ շատ տեղեր գեղին աղան ինքն կ՝ընէ (ամէն թահսիլաթի ատեն, որ արդէն օր, շաբաթ, ամիս, եղանակ չունի, մշտատև ու անդադրում է) տուրքի թէվզիաթը և երբ դրամը հաւաքի ժողովրդէն, աղան իր առիւծի բաժինն և թ ա հ ս ի լ ա ա ր ն ու ս ո ւ վ ա ր ի զապթիաներն ու զօրքերն իրենց պատշաճ բաժիններն ու տիշ-այագքիրասիներն առնելէ վերջն, աննշան մէկ մասը թ ա հ ս ի լ ա ա ր ը կառնէ կը տանի (առանց հայ ռէիսին ընկալագիր կամ ոևէ գիր մը տալու) մ է ր ք է զ ի գ ա զ ա ն, ա՛լ իր խղճին (որ չկայ ընդհանրապէս) կամ վերը բացատրուածին պէս անճիշդ ու անարդար կերպով արձանագրելու համար՝ ի մ ա զ պ ա թ ա ն (շատ անգամ մալ-միւտիրիին և սանտրգ-էմինիին ալ՝ արժանաւոր բաժին մը հանելէ վերջը) և կամ ինքն ու շահակից քանի մը մ է մ օ ւ ր ն ե ր՝ իրարու հետ անհետացնելու համար. — Լսած ենք թ ա հ ս ի լ ա թ ն ե ր յորում խեղճ ժողովրդէն 20-25 ղսկի գանձուած և մ ա զ պ ա թ ա յ ի ն մէջ 5 ոսկի միայն արձանագրուած է։ Եվ այսպէս խեղճ ջր տգէտ ժողովուրդը կուտայ ու կուտայ և իր պարտքն չգոցելէ զատ պ ա գ ա ե ա ն կը ստուերանայ, ոչ կը ստուարանայ այնպիսի համեմատութեամբ մը, զոր թուաբանական, աշխէպիայական կամ լօկարիդմայական ոևէ կանոնի մը չի կրնար պատշաճեցնել մարդ և շատ հաւանական է որ, լաւ ու քաջ թուագէտ մը՝ եթէ հանդիպէր այսպիսի հաշիւի մը՝ մէջէն չկարենալով ելլել, նոր կանոն մը կամ տարազ մը պիտի հնարէր անշուշտ, ի պատիս և ի պարծանս թէ իրէն անձին և թէ գիտութեան. ...

Ասկէ դիւրին է հետևցնել թէ խեղճ ժողովուրդը տուրքի հաշուն աղային, թահսիլաթներու, սուվարի և հետևակ ռստիկան-զօրքերու (և իրենց դրարներու) կոկորդը ինկած գումարով և թէ հաց, ոչխար, օղի, գարի, յարդ և պարագաներով հանդերձ՝ տուած դրամներովը իր բուն և արդար պարտքն ամբողջ և կրկին ու երեքկին հատուցանելէ զատ, գարձեալ, պնողոք ու անհատնում պ ա գ ա ե ա յ ի բեռին տակ կը հեծէ ու կը մաշի։ Եվ քանի որ այս կողմը թահսիլաթը ամէնօրեայ է և արդէն թահսիլաթէն զատ գործ մը չունի և չկատարեր բարեխնամ (?) կառավարութիւնը, խեղճ ժողովուրդը յտարեկան %՝ 50-60-80-100 տոկոսով և կամ մէկ արծաթ մէճիտը, կալի ատեն քէլ մը ցորենին, որ ըլել է 50-60 ղրշ.-ով պարտք ընելու կըստիպի յաճախ և երբ խեղճ գիւղացին իր արիւն-քրտինքով և տոկոս-պարտքով շաղախուած ցանքին հոգնաքը կ՝ընէ և կ՝ընէ, կալին վրայ իսկ կը թափին իր գլուխը անողոք պարտապահանջները։ Միւլթէզիմը իր բարդեալ, յաւելեալ անարդար իրաւունքը կը վերցնէ, պարտապահանջներ՝ իրենց պարտքդրամին արժէքը, աղան կամ պէյը, կամ շէյխը ալ՝ իրենց դարաւոր և որոշեալ իրաւունքները (?) և շատ քիչեր խեղճ գիւղացիներէն բախտ կունենան իրենց բոլոր պարտքերն հատուցանելէն վերջ՝ կալին ընտիր արդիւնքներովը՝ քչիկ մը գարի կամ կըլկըլ իրենց տունը տանելու, իրենց լաճերու ձմրան պաշար հայթայթելու համար։ (Եւ յառաջիկայ տարուան ցանքին սերմնցուն ու մշտակայ տուրքերուն դրամը դարձեալ՝ վերոյիշեալ եղանակաւ և պայմաններով պարտք ընելու ստիպուած)։ — Իսկ արդէն մեծագոյն մասին (գիւղացիներու) կալի արդիւնքը, իրենց պարտքերուն չբաւեչուն, պարտապահանջներն անոնց դժուարները — ու եթէ անոնք ալ չբաւեն գոցելու — իրենց առտնին գոյքերն ալ և երբեմն աւա՜ղ, գիւղացւոյն մանչ կամ աղջիկ մէկ զաւակը կը քշէ կը տանի դրամի փոխարէն։ Ձմրան պաշարը առաջիկայ տարուն ցանքին սերմն և տուրք-պարտքերու հ ա գ գ ը դարձեալ միևնոյն (վերոյիշեալ) ձևով և օրէնքով պարտք ընելու ստիպուած է։ Եւ եթէ քաջութիւն ու վարկ ունի այդ տուրքերուն յոռի շրջանը բոլորելու կ՝ընէ յ՝ու կը շարունակէ՝ ժամանակ մ՝ալ այդ դժոխային կեանքն ապրելու և դառն ու լեղի հացն ճարելու համար, իսկ եթէ չունի այդ քաջութիւնն ու վարկը, գիշեր մը կառնու իր զաւակներն ու մնացած առտնին գոյքերն „մնաս բարեաւ“ կ՝ըսէ իր գիւղին և գլուխը կ՝առնէ կերթայ նագլխանէ կ՝ըլլայ, այլուր փնտռելու համար իր բախտն։

Եւ ահա այսպէս ու այսպիսի դառնութեամբ ու արցունքով իրենց հայրենի օճախն ու կալուածներն թողլով, փախչող նագլխանէ եղողները գեղական բարեացակամ ? իշխանութիւնը չհարցնելէ, չփնտռելէ և անոնց ն ա գ ը լ խ ա ն է ը ն ալ ելլալու պատճառները չքննելէ ու անոնց ցաւեր-տէրտէրու դարման չ՝ընծայելէ, զանոնք վերադարձնելու չ՝աշխատելէ զատ, բացակայողներն իբր ն ա գ ը լ խ ա ն է չ՝ընդունիր, առարկելով թէ ր է ս մ է ն ու ի լ մ ու խ ա պ է ր ն ե ր ո վ չեն գացած։ Եւ ատոնց բոլորն ունեցեալ պարտքերը, ստուերացեալ, ստուարացեալ, մնացող գիւղացիներէն պահանջելով և խիստ ու բուռի միջոցներով գանձելով մէկ կողմէ, և միւս կողմէն արիւնարբու և հարստահարիչ աշիրէթներու, հշգ ը ե ա ն ե ր ո ւ և ք է օ չ է ր ն ե ր ո ւ ազատ ու ընդարձակ ասպարէզ թողլով կըստիպէ կամ կուզէ զր մնացածներն ալ փախչին և ճայրանակ գիւղերը բոլորովին ամայանան և ք է գ չ է ր ն ե ր ը դան տիրանան, հերկեն,

ջանեն ուղ աւարեն և այն՝ առանց կուտ մը ինկ տուրք տալու տէրութեան, ինչպէս որ այսպէս եղած են մեր վիճակի թեմերէն բնզմաթիւ հայ կամ հայաբնակ գիւղերը, և երբ այս ուղղութիւնը կամ քաղաքականութիւնը շարունակէ, այսպէս քիչ ժամանակէն ճիշդ այդպէս պիտի ըլլան և ցմայանան մնացած գիւղերն ալ։

Եւ տեղականիշխանութեան այս քաղաքականութեան ներքին ծրագիրը կամ թաքուն նպատակը հարկ չկայ հոս գրի առնելու և յայտնելու, դժուար չէ մակաբերել զայն Ազգախնամ Պատրիարքարանի հպվար։

Գիւղին բացակայողներու պ ա գ ը ե ա ն ներկաներէն ուզելուն և աւերեալ ու այժմ քէօչէրներէ շահագործեալ գիւղերուն ալ պարտքերն դարձեալ մօտակայ գիւղերու ներկաներէն պահանջելուն ի հաստատութիւն, հարիւրէն մէկ կը ներփակեմ Գուպինի (ի Ղարզան) մէկ խնդրագրի պատճէնը և ձեր բարձր սրբազնութեան ուշադրութիւնն կը հրաւիրեմ վրան։ Եւ այսքան բազմազան պարտք-տուրքերու տակ նիւթական այսքան անդ հանդուրժելի անձկութեան տակ հալող ցաւ միջավայրի այսքան ճնշող, հարստահարող և ցամքեցնող մթնոլորտին մէջ խեղդուող խեղճ, տգէտ, անպաշտպան ու թշուառ ժողովրդեան համար արդար ըլլալու համար պէտք է ըսել որ շատ անբնական և անտրամաբանական չէ կրօնափոխութեան կամ դաւանափոխութեան ցանկալ, որքան որ իրականին մէջ դրական ու տևական օգուտ մը, շահ մը կամ ըղծում մը չտեսնէ այն իր ըրած շարժման կամ ունեցած ցանկութեան գոհացումն վերջն ալ, բայց խեղճ ժողովուրդը չխորհիր ու չնախատեսեր այսքանը։

Եւ կրօնափոխութիւնը դէպի իսլամական կրօն արդէն միշտ կայ ու կայ այս կողմեր և ամէն ատեն տեղի կունենայ առաւել կամ նուազ յաճախութեամբ կամ ընդարձակութեամբ. շաբաթ կամ ամիս չկայ որ 1-2 անձեր կամ ընտանիքներ կրօնափոխ չ'ըլլան. միմիայն Ս.-ի կառավարութեան մէջ, ալ չորս գաղաներու մէջ որքան տեղի կունենայ չենք գիտեր և կարելի չէ ճշդել ալ քանի որ միջոցներ կը պակսին տեղեկանալու և տեղեկագրելու։

Իսկ դաւանափոխութեան շարժումը դէպի կաթոլիկութիւն նոր ծայր տված Ղ.-ի Զոգին մէջ, ինչպէս որ հեռագրով և նամակներով ծանուցի ձեր ամենապատուութեան։ Եւ թէպէտ և հիմա առերևոյթս մարած կամ հանդարտած կը թուի ըլլալ այն, վերստինկրնայ արծածիլ, դառնագին ազէտ-կորուստ սպառնալով մեր համայնքին։

Կարևոր և կենսական խնդիր մ'ալ զոր հպատակասէր և արդարադատ Վեհ. Օգոստափառ կայսրութիւն անհուն երախտապարտութեամբ պէտք է արձանագրել այն է որ Տարօնոյ և շրջականերու դաւանափոխութեան շարժումի վրայ, որովհետև կը լսենք թէ տարօնցիք ինչ զօրաւոր ու բանաւոր պատճառներով անմտութիւն ունեցած են եղեր օրթոդոքսութեան մէջ գտնել կամ կորսնցնել իրենց մխիթարութիւնն ու հանգիստն, զոր կը վայելեն և կը վայելենք ալ համօրէն հայ ժողովուրդս թէ մերս Հայ. Ս. եկեղեցւոյ ծոցին մէջ և թէ մանաւանդ պատուական վեհ. կայսրերու շնորհաշուք հովանիին տակ դարերէ ի վեր. բարեկարգիչ պաշտօնեաներ եկած են ի Տարօն։ Յատնոյն նպատակաւ հրահանգներ տուած են եղեր նաև Բ.-ի և Տ.-ի կուսակալութեանց ալ, որոնց ալայը-պէյերը 1-2 ամիսէ ի վեր թէ Պ.-ի (Տ.) և թէ Ղ.-ի գաղաներու աղաներուն և է շ գ ը ե ա կարծածներուն խիստ յարձնարարականներ և սպառնալիքներ հաղորդեցին և յուղղութիւն հրաւիրեցին կըսեն և Պ.-ի մէջ քանի մը բռնաւոր աղաներ կամ է շ գ ը ե ա ն ե ր ձերբակալեր ու Տ. տարեր են։ Իսկ Ղ.-ի աղաները՝ շնորհիւ Բ.-ի Ալայը-պէյին խիստ յանձնարարութեանց և սպառնալիքներուն՝ սմքած ու հանդարտած են եղեր հիմայ, և այնչափ հլու և հնազանդ ու բարեբարոյ դարձած են որ, կ'ըսեն թէ մօտ օրէն կայսերական ներողամտութեան ալ պիտի արժանանան եղերջ։

Եւ այդ հաղաներէն ոմանց արարքներն ածուգեր, թ ա հ գ ի գ ա թ ըրեր են, և շատ լաւ թ ա հ գ ի գ ա թ մ'ըրեր են կ'ըսեն, որուն գաղափար մը կրնայ տալ ներփակ խնդրագիրի մը պատճէնը, որ 95-ի դէպքէն անմիջապէս յետոյ շատ քաղաքներէ և գաւառներէս ստացումին եղանկը և կատարած ու պէտք եղած տեղն մատուցած ճշգրտապատում տեղեկագիրներու ոճը և գոյնը կը յիշեցնէ։ Այս խնդրագիրը Ռ.-էն ղրկած և ազգ. պատրիարքարանի ուղղածն է։

Ահաւասիկ Ս. Հայր, վիճակիս ժողովրդին կարօտուած թշուառ կացութիւնը և զայն յառաջ բերող պատճառները, կացութիւն մը, զոր ճշգրիտ ու կատարեալ կերպով նկագրել ու պատկերացնել դժուար է գրչով, պէտք է ներկայ, ականատես և ականջալուր ըլլալ, կատարեալ գաղափար մը կազմելու և զգաչելու համար.

Եւ եթէ այս քանի մը տողերը երկարեցի և նուիրեցի ժողովրդեանս կացութեան մէկ աղօտ նկարագրութեանը, նպատակս այն է որ, կացութիւնը անտանելի է և աղիտաբեր, պէտք է վերջ մը կամ դարման մը տալ ասոր, ապա թէ ոչ շատ ծանր և աղիտաւոր հետևանքներ կրնայ ունենալ և ողբալի ու անդառնալի կորուստ ու պատուհասներ կրնայ բերել ու մանաւանդ թէ Տարօնոյ տխուր և չար օրինակը ամենուն ականջն է հասած և բերանէ բերան՝ կը շրջի, կը շրջի։

Ասոր համար ըստ իմ խոնարհ կարծեաց, երկու միջոց կայ գործադրելի, Ա) դրամական օգնութիւն մը, կամ կարևոր նպաստ մը փութացնել հարկ անհրաժեշտ է վիճակիս կարօտ ու թշուառ ժողովրդեան, գէթ մասամբ սփոփանք և սրտապնդում տալու և իր միտքն ու աչքն ուրիշ հորիզոններ շրջելէ կորսնցնելու համար։

Բ) Հարկ անհրաժեշտ է որ Ձեր Ամենապատուութիւնը և Կեդրոն. Պատկ. Վարչութիւնը փութայ ժողովրդեան կացութիւնը իր բովանդակ գոյներովն ու դառնութիւններովը մատուցանել ներկայացնել բարեգութ և հպատակասէր Վեհ. Օգոստ. կայսեր ոտքը և անոր արքայական բարձր գթութիւնն և արդարութիւնը հայցել ժողովրդին կացութեան բարւոքման և մերս ս. եկեղեցւոյ սրբ. ծոցին, շունչին տակ և մանաւանդ օսմ. վեհապանծ պետութեան և բարեխնամ Վեհ. կայսեր շնորհաբաշխ հովանոյն տակ, շարունակելով անսպառ ու պնդնահատելի բարիքներն ու անփոխարինելի և անբաղդատելի մխիթարութիւնն ու բարեբաստութիւնը վայելելու մասին, ինչպէս վայելած ենք մինչև այսօր դարերէ ի վեր։

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԲԱԳՐԵՒԱՆԴԻ

Մարտ 1902

Մեր նահանգը կը բաղկանայ 3 գիւղաքաղաքներէ՝ 1) Բայազիտ, 2) Գարա-Քիլիսէ, 3) Թօփրագ-Գալէ և 29 հայաբնակ գիւղերէ։ Միւթէսարիֆը կը նստի Բայա-

գէտի մէջ, ուր 120 տուն հայ բնակիչ կայ, քայց լոկ անունով միայն հայ, որովհետև ոչ մէկ գործունէութիւն կայ։ Վեց ամսուան ընթացքին մէջ 3 հայ աղջիկ իրենց դրացի թիւրքերը փախցուցին։ Մանուկներէն տարան 60 ձի։ Քիմոյեաններէն 300 լիրայի ապրանք։

Արծափ գիւղին վրայ կը տիրէ Ջալալցու բռնութիւնը։ Մանաւանդ այդ ցեղի գլուխ և Համիդիէի հազարապետ Ահմատ մաղայի հազարու մէկ տեսակ հայրըստահարութիւնները. նա յափշտակեց 20 չեռ ցորեն, 120 աշխատաւոր մարդիկ իր գործին ծառայեցուց 3-4 օր, իսկ ձմեռն 120 տչխար, 2 ձի ու 4 գոմէշ գիւղացիներուն քունի պահել տուեց։

Քորուն գիւղին վրայ հարստահարէ Մոսէաղիր Զիլանցի Հասան աղան իր ցեղակիցներով։ Գիւղէն տարեր են 40 ոչխար, 2 եզ, 4 կով, 3 մոզիկ, 50 հաւ, 4 բեռ ցորեն. թողուցինք մանրամասնութիւնները։

Մոսունի մէջ կը բնակին 250 կպնդկաւոր զօրք իրենց զօրապետներով. սարսափելի են այդ զօրքի բռնութիւնները։ Այդ գիւղի վրայ, մեթէ քիւրդերը ապրանքին կը տիրեն, ասոնք կանանց պատիւը շարունակ կը բզնաբարեն։

Ջուանշան, Խարաբազար, Ղուրմլիբոնէ, Ջախ և Սամոյ գիւղերուն կը տիրէ Ղասկանցի Ղէղապետ և Համիդիէի գայմագամ Մուսթաֆա բէյ։ Ամէն օր իր կատաղութեան թոյնը կը թափէ յիշեալ գիւղերուն գլխին։ Մանաւանդ կը կեղեքէ զանոնք թէ նիւթապէս և թէ բարոյապէս։ Մտադիր է եկեղեցիները դարձնել պէտք։ Իր ցեղակիցներէն մէկ-մէկ տուն յիշեալ գիւղերուն մէջ դրեր է։ Ինչպէս. Խարաբազար՝ Հաճի Մահմատ, Թոմվիլիճէլեխ՝ Խամ աղէն, Սայտոն՝ աւազակ Մամոն իր եղբայրներով, Ջուջան՝ իր որդի Ալի էֆէնտին պիտի նստեցնէր, բայց լամոկցի Մահմատ բէյը թոյլ չտուաց, ապրը հմար երկու ցեղերու մէջ ծաստիկ թշնամութիւն կայ հիմա։

Թուէս 2 ամիս առաջ, երկու եղբայրք՝ Յարթին և Գէորգ հարիւր օսպ ձէթ կը տանէին ծախելու։ բռնապետ Մուսթաֆա բէյ իր աւազակներէն հոգի ղրկեց կողոպտել տուեց անասունները։ Ընդդիմադրութիւն չ'ընելու պատճառը զէնք չունենալն էր, բայց քանի մը օրէն վերջ մեր դրացի այլերէն զէնք առանք գնացինք և մեր վրէժը լմնցուցինք։ Հիմա այդ դէպքը մեզ հետ թշնամութեամբ կը վարի միշտ մեր կեանքին աշխատելով։

Ս։ Օհանոյ վանուց վրայ կ'իշխէ լարաբերան խալիֆա մը, որ բոլոր տիրացեր է վանքի ամենաշահաւէտ հողերուն ու ջրերուն, որոնք գարերէ իվեր տէրութեան իրատէով վանքին կը պատկանէին։ Այդ կալուածները, վանքի ծախսով շինուած ջրակներու ջրերը փողով կը ծախէ վանքին, շատ անգամ նոյնիսկ փողով ալ վանքին չի տար։ Այլ կուտայ իր ցեղին։ Այդ չարիքներով դեռ չի յագենար։ պատահած ժամանակ ձեռքը կը պարզէ դէպի վանքի խաչն ու գմբէթն և կը հայհոյէ։

Զիրոյ գիւղը հիմնայատակ ըրաւ Զիլանցի Էյիբ փաշայի որդի Ռասուլ բէյ։ եկեղեցին քանդեց ու քարն ու փայտը իր անասուններուն համար ախոռ շինել տուաւ։ Այդ գիւղի հայերուն ամբողջ ունեցուածքը իր ձեռքն է անցեր. չորս ամիս առաջ գիւղի երկու աղքատ երիտասարդներուն ծանր կերպով վիրաւորեց, մէկին սրով, միւսին գնդակով։

Խաչոն, Յովնջալի, Խոր Մանգասար, Մաղրէ գիւղերը յիշեալ ցեղի պետերի կրակով վառեր մոխիր դարձեր են։ Նահապետական տները օրական ֆացի կաթօտ են։ Մանգասարէն տարան 120 անասուն՝ եզ, կով, ձի։ Մաղրէէն 20 ոչխար, վերջապէս անընդհատ կը տանին, եթէ աղբիւր մը չինէր կը ցամքէր։ Այս չորս գիւղերու կողոպուտի գումարն է 100 բեռ ցորեն, 80 ոչխար, 150 եզ, կով, ձի, 60 շաքարի խանտ, 20 օխա չայ, 100 լիտր կարթօլ, 300 հաւ։

Էրանոս գիւղ մնացեր է անգութ և անմարդ Մահմատ էֆէնտու ճանկերուն մէջ, ինչպէս արծիւ փոքր թռչունները իր ճանկերի մէջ կ'առնէ։

Գարա-Քիլիսէ մէկ մարմարելի ցաւի հանդիպեցաւ։ Եանջալեցի տէր Յովհաննէսի աղջիկը նոյն տեղացի տէր Կարապետի որդի Լեւոնի ամուսինն էր։ երկու հատ ալ զաւակ ունէր. անցեալ օգոստոս 20-ին իրենց դրացի Խարֆազեան Ահմատ աղայի յամուկ Շէրոն, քանի մը չարագործներով խեղճի դուռը կոխեցին և հարսը առևանգեցին տարան. կատղեցաւ քաջ տէր Յովհաննէսը. ջրոն հարդոցներով, 40 ծրէն վերջ, տանող թիւրքի դուռը կոխեցին և աղջիկը յետ առնելով ղրկեցին Ռուսիա։

Աշխալի գիւղը մնացեր է զելանցի Ալի բէյի հարստահարութեան տակ. իր եղբայր Իբրահիմ բէյը դրեր է այդ գիւղի մէջ, որ չարաչար կը տանջէ և կը նեղէ օրականները։ Հացը մարդուն ձեռքէն կառնէ, տեղացի հայերն իրենց անասուններով ամէն օր իր գործերով կը զբաղեցնէ, թշնառներու ապրուստի դուռն մէկէն գոցեր է։ Կարծեմ Թոխմախը այդ չարագործէն փախնելու է։ Քանի օր իր դրացին էր այդ բռնապետը։

Ցամաս հանդիպեցաւ կանոնաւոր զօրքերու բռնութեանդ. գիւղին մէջ կը բնակի հարիւրապետ մը իր զօրքերով։ Գիշերուան ժամը 3-ին 10 զինուած զօրք Յարոյի տունը կոխեցին, որ անոր կոյն աղջիկն առևանգեն, շատ ապրին տան մէջ եղող երեք երիտասարդները, որոնք չհամբերելով այդ բռնութեան, ընդդիմացան զօրքերուն, աղջիկն նոր զօրքերուն զարնելով, ձիրքերի զէնքերն աղ ձեռ երից առնելով յետ ղրկեցին։

Առաւօտուն գիւղի իշխանները եկան, զէնքերը կոտրուն զինուորներուն յանձնեցին և աղջիկն ալ եանջալեցի երիտասարդի մը վրայ պսակեցին։ Երկու կողմէն ալ կառավարութեան դիմեցին։ բայց մինչև օրս դեռ հարցաքննութիւն մը չեղաւ։ Մինակ հայերուն ըստած է թէ, ձեր գանգատն ոչինչ է, զոլքն թղկայ համար չէ եկեր, այլ այդ տան վրայ փող է տունեցեր, եկեր է պահանջելու։ կառավարութեան նպատակը արդէն յայտնի է, զօրքին արդարացնել իսկ հայերուն բանտարկել և նեղել։ Այդ չարագործութեան մեղսակից ընկերն է ոչ Թամոն։

Խաչլու, Թոփրագ-ագաճ Խոշիան, Իրիցուգեղ, Մոլասիլէման, Զէթկան և Խայիաբէկ գիւղերը կը տանջին հայոց հին թշնամի Մահմատ փաշայի տղի և թոռնեղբոր բռնութեան տակ։ ուրիշներէն հասած չարիքն եթէ ծառին մինակ ճիւղերը կը կտրէր։ այդ բիլիարդի ցեղը կուզէ այս 7 գիւղի բնակիչ հայերը արմատախիլ ընել։ գիշեր և ցորեկ կը նեղեն, կ'աշխատցնեն, կը կողոպտեն անդադար կերպով, կը քաշքշեն հայերը հազար տեսակ փորձանքներու մէջէն իրենց ընտանիքներով։ Չկար վերաբուժ մը որ այդ հին ու նոր վէրքերուն դարման ընէ, կամ ընել ջանայ։

Եղնթափէ, Զլկանի և Խաստուր գիւղերը դեռ կան քոչի տակ թաղնուած են, այնպէս կ'երազեն

թէ, գլուխներս կրկին անգամ քողն տակէն դուրս հանելուն պէս կապարէ և արճիճէ գնդակներ մեր գլխուն պիտի տեղացնեն. արդէն ինչ կայրու գոյք որ կար, Խաստուրայ դէպքին կողոպտեցին տարան։ Սիփկրցի քրդերը կատարեցին այդ ոճրագործութիւնը։

Կառավարութիւնը մարտ տարեմուտ ամսէն 4 ամիս առաջ կը պահանջէ եկող տարուան բատալիան, ծանր ու ապօրինի կերպով. 5 օրուայ երեխայի համար կը պահանջէ կէս օսմանեան լիրայ։ այս պահանջը անխիղճ կերպով կը գործադրէ աղքատներուն, կաղերուն, կոյրերուն ու որբերուն վրայ. վերջապէս միջոց ունեցողէն թէ չունեցողէն խստիւ կը պահանջէ ու կառնէ. եթէ գերդաստանէ մը մեռնողներ լինին, լինին ատոնք մեծ թէ փոքր, աշխատող կամ չ'աշխատող, ատոնց տուրքն ևս կը պահանջէ երկար տարիներ ու կ'առնէ։ Մուրացիկներէն թամաթուաթը որոշուածէն կրկնապատիկը եռապատիկը կ'առնէ։ Փետրուարին կըսկսին ոչխարները համրել. եթէ ես առաջի տարին ունեցեր եմ հարիւր ոչխար, իսկ այս տարի հարիւրէն պակաս, այդ միևնոյն է անոր համար, հարիւր ոչխարի աղնամ կը պահանջէ, թէպէտ և ոչխարի պակսելու պատճառը մեր երկրի մէջ տիրող անիշխանութիւնն ու կողոպուտն է։ Իսկ եթէ հարիւրէն աւելի լինի այդ սիրով կ'ընդունի։ Երբ պաշտօնեաները կուգան ոչխարները համրելու, սովորութիւն ունին զրպարտութիւն ընել ոչխարի տիրոջ վրայ, ըսելով թէ տէրը 10-20-30 ոչխար դիտաւորութեամբ պահեր է. առաջուց այս խօսքը կ'ըսեն, որպէս զի փոքր ինչ կաշառք ստանան, հակառակ դէպքում ոչխարի տէրը շատ վնասներ կը կրէ, բայց ցաւն այն է որ այդ կաշառակեր անիծուածները քէջով չեն բաւականանար։

Տասանորդ հաւաքելու ատեն, յատկապէս կը ծախէ հայ գիւղերու երեսը և իր տասանորդը կըստանայ. գիւղերու երեսը կառնեն կառավարական պաշտօնեաները, մէկ-երկուսը ձեռք ձեռքի տուած, կամ բարբարոս և բիլիար քիւրդ ցեղապետ մը. այդ պտեն եկ տես թէ ինչ ցաւալի անցքեր կը պատահին, որ ոչ մի կերպով չի կարելի նկարագրել. ոչ ճարտարախօսը իր ճարտարութեամբ, ոչ գրագէտը գրչով կրնայ պատմել այդ աղետները. մ Եզի տեղ աքլոր, կովի տեղ հաւն է մնացեր հայ գիւղացուն. արդէն գիւղ առնողը կը նստի գիւղի մէջ՝ իր հացը գիւղացիք կուտան կարգով, երբ կ'արգի կուգայ աղքատին, աղքատն եթէ ունի նէ այդ աքլորը և հաւը պէտք է մորթէ և կերցնէ եկողներուն. 7-էն մէկը գիւղ առնողն կ'առնէ, 10-էն մէկը կալէմաստ կ'առնէն։

Միւթէսարիֆէ, գայմագամներէ սկսեալ մինչև յետին զինուորականները որ տեղ որ կը մնան՝ իրենց և իրենց անասուններու ապրուստը այն տեղի հայերուն վրան է։ Արդէն յայտնի է որ հայ գիւղերուն մէջ կապրին զօրքերը։ Ցաւախ կը պատահի որ պաշտօնեաները իրենց ռոճիկները չեն ստանար կառավարութենէն, և երբ կը պահանջեն, կառավարութիւնը հայ գիւղ մը մատնանիշ կ'ընէ, ըսելով. „գնա՛ և հայ գիւղէն ստացի՛"։ Պաշտօնեան ուրախութեամբ քայլերը կ'ուղղէ դէպի հայ գիւղը և գիւղացիներուն նեղելով եռապատիկը կըստանայ։

Ահա այսքան անտանելի զրկանքներու կ'ենթարկուին հայ գիւղերը և երբ գիւղացին՝ դրդուած այդ ոճիրներէն՝ կը դիմէ կառավարութեան իր բողոքն արտայայտելու, կառավարութիւնը խուլ ականջ կ'ընէ. նոյն իսկ այն պաշտօնեան, որին դիմեր էր բողոքատուն, կ'ելնէ կը ծեծէ գիւղացուն ըլլալով. „գնա՛ անկրօն գեաւուր, դուք մեր հպատակները չէք, ձեզ ինչ որ ընեն տեղն է"։ Եւ հայ գիւղացին վիզը ծռած տուն կը դառնայ, ճանապարհին իր բողոքը Աստծուն կարդալով... Երբ տուն կը հասնի, կը տեսնէ որ իր մէկ կովը, որի վրան էր իր ընտանիքի ապրուստը, այն ալ տարեր են։? Հիմա ի՞նչ ընէ գիւղացին, ո՞ւմ դիմէ և ո՞ւմ բողոքէ...

Կ'ուզենայինք, կը ջնջուի հայութիւնը Հայաստանի մէջ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՄՈՒՇԵՆ

1/13 յունիս 1902

Սիրելի ընկերներ։

Մեր ողբալի դրութիւնը լիովին նկարագրելու համար իմ գրիչ անկարող է. քառեր կը պակսին ինձ...

Թողունք ժողովրդեան սարսափելի աղքատութիւն, որ օրն ի բուն կիզէչ արևի տակ արիւն քրտինք թափելով դեռ չի կարողանայ իր օրուայ պարէն հայթայթել, կառավարական, թիւրքական և քիւրդական խժդժութիւններն ալ աւելի ու աւելի։ Ինչպէս որ ժողովրդական առածն ալ կ'ըսէ, որ „ջաղացի մէջ քիչ դէվ կ'կար, մէկ ալ շողտունէն ինկաւ", կարծես թէ բաւական չէին թրքական ու քրդական հալածանքներ, այժմ մի նոր ձարբ ալ եկաւ իկատար ածելու արիւնարբու թիւրք կառավարութեան ծրագիրը. այն է որ թիւրք կառավարութիւն այժմ ամէն կարելի և անկարելի միջոց ձեռք է առած քանդել, բնաջինջ ընել Սասնոյ և Մուշի շրջակայ լեռնաբնակ հայ գիւղեր, և անոնց տեղ լեցնել մոլեկրօն թիւրքին, բարբարոս և վայրենի քիւրդին ու արիւնարբու գող աւազակ չէրքէզներին։

Թիւրք կառավարութեան այս սև նպատակի համար, յատուկ հրահանգով եկած Մուշ և Մշոյ դաշտի գիւղերն են լեցուած 3 հազարէն աւելի գաղթական չէրքէզներ, որոնք օր աւուր կըսպասեն Սասնոյ կոտորածին, որ երթան ոչ գրաւեն Սասնոյ և Սիմ լեռնաշղթայի գեղեցիկ լեռնաբնակ հայ գիւղերը. ինչպէս ասոնցմէ քանի մը հազար տուն, 6-10 տարի առաջ, եկան և բռնի քար ու քանդ ընելով Վարդոյի և Խանդրէսի (Մշոյ դաշտի հիւսիսային լեռնաշղթան) լեռնաբնակ հայ գիւղերը, իրենք համատուեցին այն տեղեր։

Միւս կողմէն այս օրերս տեղս եկած են Բուլանիխի, Մաճազկերտի, Խնուսի և Վարդոյի համիդիէ գունդերու պետերը, որոնց գաղտնի հրահանգուած է միշտ պատրաստ մնան որ իրենց նշան տուելու պէս յարձակուին Սասնոյ վրայ։ Այսպէս, պէտք է գիտնաք որ մեր դրութիւնն այժմ անբացատրելի է։ Տեղական կառավարութիւնը լուր տարածելով թէ զօրքը կերթայ Մերտին, Մանազկերտ, Տիգրանակերտ և այն, մինչդեռ գիշերային ճանապարհորդութեամբ պաշարման վիճակի մէջ է դրուած Սասունը, նոյնպէս թիւրք կառավարութեան բարձրագոյն հրամանաւ շուր տրուած է Սասնոյ և ներքին դաշտի քիւրդ աշիրէթներին որ գան և իրենց ընտանիքներով և խաշինքներով ամառուայ եղանակին հաստատուին Սասնոյ և Մշոյ լեռների վրայ։ Մինչդեռ Սասնոյ 94-ի կոտորածէն յետոյ, եւրոպական կառավարութիւններու աղաչեցութեամբ թիւրք կառավարութիւնը արգիլած էր այդ

քիւրդ աշիրէթներուն գալու և հաստատելու սասունցոց կալուածներու մէջ, որովհետև այն ժամանակէն նկատելի էր որ վէճի և խռովութեան գլխաւոր շարժառիթը այդ բանն էր, որ այդ թափառաշրջիկ քիւրդեր ամառ ժամանակ հաստատելով Սպոնոյ լեռներուն վրայ, քացի այն որ իրենց բազմաթիւ հոտերով ու խաշինքներով բոլորովին կը փճացնեն ու քար ու քանդ կը դարձնեն սասունցոց արօտատեղիները, մարգագետինները և անտառները, նաև ետ չեն մնար գողութիւններէ, մարդասպանութիւններէ և աւազակութիւններէ։ Ահա թէ ինչպէս թիւրք կառավարութիւնը, ուղղակի ինքը, կը ստեղծէ առիթ հայերին և քիւրդերին կռուեցնելու, որպէս զի ինքն ահագին բանակով շուտով վրայ հասնի և կոտորէ հայերին, ըսելով որ „դուք խռովարար էք, ապստամբ էք տէրութեան դէմ. տուրք չէք տար, կառավարութեան տուն չէք գար և անոր ղրկած պաշտօնեանկրուն չէք հնազանդիր պէտք եղածին պէս, մանաւանդ որ դուք անհաւատարիմ էք որ ձեր մէջ գեաւուրներ և ջանֆէդայիներ կը պահէք“։

Սասնոյ արևմտեան-հարաւ և հարաւային-արևելեան մասերը շրջապատած են հետևեալ արիւնարբու, ընչաքաղց, բարբարոս և թափառաշրջիկ քիւրդ աշիրէթներով, ինչպէս են Պէլէքցիք, Սասունցիք, Խիանցի, Բագրանցիք Ռշքոթանցի և ն., որոնք օր աւուր թիւրքական քարձրագոյն հրամանին կրսպասեն, որ թալան և գուցէ կոտորած սկսեն ամէն կողմէն։

Մշոր դաշտի վիճակն ալ ոչ նւազ անանխանձելի է. թ ա խ թ ա մ ա յ ի պատճառաւ օրէցօր հացէ գին սկսել է բարձրանալ. օր ցորեկով գիւղէ գիւղ գնալու ապահովութիւն չկայ. կաղաւարական և քրդական հայածանքներէն ամէն մարդ այն աստիճան սարսափած և ահ ու դողի մէջ է որ, ինչպէս կ'ըսեն, հ ե ւ ո ց դէպ չ'ելներ, այսինքն ամէն մարդ համարձակ շունչ չէ կարող քաշել։

Գիւղերը պաշարուած վիճակի մէջ են. զինուորները կը շրջին ամէն կողմ։ Ասոնք տեղաւորեալ են հայոց տներուն և տեղ տեղ ալ գիւղային եկեղեցիներու կից դպրոցներուն մէջ։ Վարդենիսը ժամանակ մը կը պարծենար իր դպրոցի շէնքով, իսկ այդ շէնքը այսօր զօրքերուն է յանձնուած։ Նոյնը կը նկատուի քիչ մը վեր, դէպի դաշտը։ Ահա քեզ Խարզ գիւղ, Ոչշամ, Կուզաղբիւր, Ցրօնք, Խասպիւղ, Աւզուն, Խաներ, Յաքգաւանք, Յառվառիճ, ու դէպի արևելք՝ Կորավու, Ծխավու, Ցաւրան, Զրիկ Նորշէն, իսկ Սասնոյ շրջապատ՝ բացի սուրբ Օհաննու ու Աղաքելոց վանքէն՝ Հաւատուրիկ, Բերդակ, Յառախ, Մօկունք, Կառներ, Կզլաղջ, Փեթար բոլոր գիւղերու մէջն ալ տեղաւորուած են զինուորները. ամէն մէկ գիւղ թատերաբեմ մը դարձեր է։

Այս կուլ վէ խառնաշփոթ դրութեան մէջ Բաղէշի կուսակալի գալատեան կրսպասեն։ Օրերս Ս. Կարապետի վանահայր Վարդան վարդապետ, վանքի պարտուց համար, տեղական կառավարութեան հրաւիրանաւ քանի մը գիւղերէն մատաղցուներ և հացահատիկի նուէրներ հաւաքելու համար հրցաքննութեան ենթարկուեցաւ։ Տեղական կառավարութիւնը լաւ գիտէր որ այդ հաւաքած փրեղէնք ճիշդ վանքի համար է և Վարդան վարդապետ այն սիրան ու հոգին չունի որ այս տագնապալի ժամանակին ժողովրդեան ցաւերին և յեղափոխութեան համար վատնէ, սակայն կառավարութիւն մը երկար փորձառութիւններէ ետեղամիտ և սուստ դարձեր է. գիտցամ ասոր-անոր կը բանտարկէ, Վարդան վարդապետին հարցաքննութեան ենթարկէ, որ ոչ օք չկարողանայ տեղէն շարժիլ և կամ գրիչ ձեռք առնել այս տխուր իրողութիւնը բարձրագոյն տեղեր գրելու, ճիշդ այս տխուր-նպատակի համար արդէն 25-30 անմեղ մարդիկ բանտերն են լեցուած և կը տանջուին, դեռ շատերն ալ պիտի բանտարկուին։

Ի՞նչ պիտի լինի մեր վիճակը, չ'գիտէ, ամէն մարդ կ'ըսէ. „Ատուած էլ բէթար է՞ն ազատէ“։

ՆԱՄԱԿՆԵՐ ԿԻԼԻԿԻԱՅԷՆ

I

Ս... 10 յունիս 1902

Անցեալ շաբաթ Մարաշէն, Զէյթունէն և Հաճընէն զինուոր ելաւ (գաղտնի) Պունտոնք և Շեվելկի գիւղերու վրայ, իբր թէ յեղափոխականն մը եկած է. շատ խուզարկութիւններ, ծեծեր, բանտարկութիւններ տեղի ունեցան, մազ մնաց որ ահագին յեղափոխութիւն մը յառաջ պիտի գար։ Կառավարութիւնը տաճիկ գիւղացիներին գրպռեց, վճռօգ և զէնք բաշխեց, վերջապէս Անտէրուն ըսուած տաճիկ գիւղին մէջ 2 սէթէրէքցի (տաճիկ) կը գտնուին կը բռնեն՝ այս է եղեր կառավարութեան շարժումը։ Սա գիտնալու ենք որ Ուլնիոյ շուրջը գտնուած բոլոր տաճիկ գիւղացիներուն զէնք և փամփուշտ բաշխուած է. տաճիկները լաւ պատրաստութիւններ կը տեսնեն, կառավարութիւնն է գրգռել, մէջերնուն փսփսուք մը կայ, բայց չենք հասկնար ինչ է։

II

Ա.ջ. 1 յգոստոս

Հարստահարութիւններուն չափ ու սահման չկայ. կը գրեմ լոյսերէն քանի մը ֆետաքրքրականները։

Կառավարութիւնը շատ խստութիւններ կը բանեցունէ Հաճընի և շրջակայքը. մանաւանդ Հաճընի գայմագամը գարշելի գազան մըն է, որ ինքնանական ազատ կիրքերը կը յագեցնէ խեղճ անպաշտպան ձգուած հայ կոյսերու և հարսերու վրայ, յաւիտեանս մրոտելով այդ խեղճերուն պատիւը։ Ոչ մի կին վստահ չէ իր պատուոյն մասին չի կրնար ֆիզիկով կերպիզ քնանալ վախնալով որ մի գուցէ ինքն ալ զոհ երթայ գայմագամին ճիւաղային, վաւաշոտ պակշոտութիւններուն։ Եւ միշտ ալ ինքնատիժ կը մնայ իր տիրոջ արժանի պէտ գարշելին։ Կոյսերը կը պղծէ անպատիժ կը մնայ, հարսները կը լլկէ անպատիժ կը մնայ, գաւակի տէր տանտիկինները կը բռնաբարէ անպատիժ կը մնայ. ալ փնտանելի կը դառնայ այնքան պատիւները աղատողին անպատժութիւնը։ Պատմեցէք եւրոպացիի մը թէ՝ այս անպիտանը, այս սրբապղծողը այնպիսի մարդ մըն է որ իր սպասաւորին (դժբախտաբար հայ), ամուսնութեան առաջին գիշերը հարսը ինքը կը վայելէ. թերևս նա անհաւատալի պիտի գտնայ այս փրոմբութիւնը, աւաղ որ իրողութիւն է...

Հաճնոյ գայմագամը իրեն յատուկ տուրքերը հաւաքելու կերպ մ'ունի. 5,000 ղրշ. արժող ապրանք մը 300 ղրշ. ծախել կուտայ. ինչ անհաւատալի բան պիտի

գտնեն թերևս շատերը, բայց դժբախտաբար իրողութիւն մըն է որ կը հաստատեմ։ Այս գայմագամը 2,000 կտոր կալուածք ծախեր տուաւ, 5,000 ղրշ. արժող կալուածը 300 ղրշ. ծախելու պայմանաւ։ Ամէն բան կարելի է երբ խնդիրը Թիւրքիոյ վրայ ըլլայ. Թիւրքիա ըսուած թատրոնի բեմին վրայ ամէն տեսակ տրամներ կը ներկայացուին։

Վերոյիշեալ գայմագամը Հաճնոյ հարուստ դասակարգը սոսկալի կերպով կը ճնշէ. հայերու տառապանքներէն ախորժելու մոլութիւն մ'ունի այս յոյնը (որովհետև յոյն մըն է Հաճնոյ գայմագամը)։

Ա.-ի շրջականները քանի մը սպանութիւններ եղան և անպատիժ մնացին ատոնց հեղինակները, որովհետև զոհերը հայ էին. երբ որ զոհը հայ է, մարդասպանի անպատժութիւնը ապահովուած է արդէն։

Ուրիշ տեղերէ եկող հայերը կտուավարութիւնը կը ձերբակալէ և իրենց հայրենիքը կը վերադարձնէ։

Հիմա հոս Ամերիկա գացող հայերը շահագործելու համար տինտիգա մը կազմեր է, որուն նախագահը Ա.-ի առաջին գօմիսէրն է։ Առջև եկող հայը կը բռնեն և կ'ըսեն թէ „դուն Ամերիկա պիտի փախչիս“. „ոչ, ճանըմ“ կ'ըսէ խեղճը, բայց օգուտ չ'ըներ. կը բանտարկեն և երաշխաւոր մը կուզեն ազատ արձակելու համար։ Ան տինտիգան քանի մը մարդեր աղ ունի, որոնք նմանուն համար ալ երաշխաւոր կ'ըլլան. քսնի մը ոսկի կորզելէ վերջը։ Վայ խեղճ հայերուն գլխուն. ինչեր կ'երևակայեն այս ժողովուրդը չարչարելու և շահագործելու համար։

Ախտասահմանէն եկողները ներս չեն մտցներ. նաւամանոյցէն ետ կը ճամբեն. ան ալ չարչարելու միջոց մ'է. հայը իր հայրենիքէն ալ կը զրկեն, իր ծնած, մեծցած հողին կարօտը քաշել կուտան...

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԼԵՒՈՆ ՍԱՆԹՈՅԵԱՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ



Այն արծիւների երամից Ֆր հանգուցեալը, որոնք 1897-ի յուլիսին էլէքտրական արագութեամբ, կատաղի թափով սլանում էին դէպի Խանասորի դաշտը՝ հազաւ ֆաւոր խողխողածներ վրէժը լուծելու։

Նա ծնուել է Ախալցխայում 1875 թուին, ծառայում էր ռուսական բանակում իբրև զինուոր։ Երբ 1897 թուին Խանասորի արշաւանքը վրէժխնդրութեան հրաւէր կարդաց հայրենիքի զինուորներին, Լևոնը թողեց օտարի ծառայութիւնը և օտարի հրացանն էլ հետն առած՝ փախաւ միացաւ իր ընկերներին։

Արշաւանքից ողջ վերադառնալով՝ 1898-ին „ՀՄԷՄ“ Կ. Կոմիտէի որոշմամբ նա տեռորի է ենթարկում Սալմաստի Մահլամ գիւղացի մատնիչ Ս տ ե փ ա ն ին։ Արդաբին թշնամիների արիւնը յագեցում չէր տուել իր վրիժառու սրտին, ներքին թշնամիների—մատնիչների—արիւնով էլ ուզում էր հովացնել իր այրուած սիրտը։ Եւ նա մեծ յաջողութեամբ ու ճարպկութեամբ գլուխ բերեց այդ տեռորը։

Լևոն երբէք չուզեց կազմակերպութեան վրայ դեռ լինել. նրա հաշուով ապրել։ Արշաւանքից և տեռորից յետոյ նա շատ կարևոր պաշտօններ կատարեց „ՀՄԷՄ“ Կենտ. Կոմիտէի որոշումներով և իր գործունէութեամբ մեծապէս նպաստեց երկրում գործող ընկերներին։

Իր համար ապրուստի միջոցներ որոնելով, 1901 թուին մտնում է Խոյի մաքսատան ծառայութեան մէջ որպէս ճիաւոր։ Եւ ամուսնանալով՝ բնակութիւն է հաստատում Ծահլամում։

Իր այս պաշտօնի մէջ նա չէ դադարում յեղափոխութեան ծառայելուց՝ միշտ աջակցում է գործող ընկերներին, կարևոր ոչ փափուկ պարագաներում դիւրութիւններ տալով նրանց։ Բացի այդ, նա միշտ օգնութեան է հասնում հայ գիւղացիներին, որոնք քրդական արշաւանքների դէմ միշտ պէտք են զգացել հայդուկների պաշտպանութեան և որոնք յաճախ հալածել են աւազակ քրդերին ու յետ խլել աւարը, ինչպէս անցեալ ամառ Մահլամ գիւղի մէջ։

Հայդուկները հայ գիւղերի պահապան հրեշտակներն են դարձել. քիւրդը երբէք չէ համարձակւում հայ գիւղի մէջ ոտ դնել, երբ իմանում է հայդուկի ներկայութիւնը։

Այս տարուայ յունիսի 10-ին, երբ Լևոնը գտնւում էր իր պաշտօնատեղում, հաւար է լսում, որ քրդերը յարձակւել են Արապլու գիւղի մօտ մի քարուանի վրայ։ Լևոնը՝ չնայած մի շարք դժուարութիւնների՝ հեծնում է ձին և սպառազինուած հասնում քրդերի եռևից. տաք կուի ժամանակ մի քանի քիւրդ գլորելուց յետոյ զարկւում է գլխից — կասկածելի է՝ քրդի, թէ իր դաւաճան թիւրք ընկերների գնդակից...

Հանգիստ համրենիքի քաջարի զինուորին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱԼԿԱՆՆԵՐՈՒՄ

Գրաֆ Գոլուխովսկի ներկայ տարուայ մայիսին հպարտ ծանուցանում էր այն բարերար դաշնագրի մասին, որ նա կապել է 1897-ին Ռուսաստանի հետ և որի շնորհիւ այսօր Բալկանները խաղաղութիւն են վայելում...

Որպիսի պատրանք։ Եւ սակայն՝ ինքը մինիստրը, գիտէր որ ստում էր։ Զգում էր նա, որ իր „ներքին մարդը“ ուժգին բողոքում է իր ծանուցումների դէմ։ Նա կմծծէք հաւատացած էր, որ աստրոռուսական դաշինքը, Բալկանեան խաղաղութեան այդ „գրաւականը“, այնքան էլ

կայուն չէ, որ եւրոպական Թիւրքիայի ստրուկ վայրերում հրդեհը բռնկուելուն պէս՝ նա պիտի օգը ցնդէ։ Զգում էր մինիստրը և այդ դաշինքի բոլոր անարդարութիւնը. ի՞նչ է նրա նպատակը. եթէ ոչ շարունակել կանգուն պահել մի դրութիւն, ուր բռնութեան զոհերի բողոքը մինչև երկինք է աղաղակում...

Պիտեր Դրաֆ Գոլուխովսկի, որ իր փափագած խաղաղութիւնը մեկ պայմանով միայն կարող է հաստատուել — այն է՝ Ռէֆորմներով Ռուսիայի status quo-ն ներքողելով հանդերձ՝ նա „բարեկամաբար" յորդորում էր սուլթանին՝ դիմել ռէֆորմների...

Թիւրք կառավարութիւնը առերևոյթ համակերպուում է բարեկամական այդ յորդորներին և արդէն կազմում է „ռէֆորմների յանձնաժողովներ"։ Ցայտնի է թէ որպիսի արժէք ունեն այդպէս տեսակ յանձնաժողովները...

Իրողութիւնը այն է, որ Մակեդոնիան ու Ալբանիան ներկայացնում են այսօր համարեա չտեսնուած գազանութիւնների թատր։ Ճիշդ է, յեղափոխական շարժումը ևս երբէք չի ընդունել այնպիսի մեծ ծաւալ երկու երկրներում, ինչպէս այդ տեսնում ենք այժմ։

Կարմիր տէռորի ճանապարհն է բռնել թիւրք կառավարութիւնը քրիստոնեայ ըմբոստների դիմաց։ Վերջիններս պատասխանում են նոյնպէս տէռորով։ Ռէակցիան ու յեղափոխութիւնը — բռնապետութեան այդ երկու հարազատ ու անբաժան ծնունդները — ընթանում են յամառ ու Յարաճուն մոլեգնութեամբ, ձգտելով ոչնչացնել փոխադարձաբար, բայց ոչ մէկն առայժմ թեղի չի տալիս։ Եւ այդպէս երկիրը ցնցուում է շարունակ՝ կրկնակի տէռորի տիրապետութեան տակ։

Արիւնոտ փաստեր կան արձանագրելու Մակեդոնիայի ու Ալբանիայի վերջին ամիսների կեանքից։ Բոլգար-մակեդոնական և եւրոպական թերթերը լի են տաճկական նարսափների նկարագրութիւններով։ Հրդեհ ու թալան, կոյսերի բռնաբարումներ, մանկի ու խաբական ջարդեր, դժոխային տանջանքներ բանտերում ևն ևն։

Այդ ահռելի կացութիւնը բնորոշելու համար՝ յիշենք միայն վերջին երկու ամսւայ վիճակագրութիւնը, որի համեմատ Մակեդոնիայի միմիայն Մոնաստիրի վիլայէթում սպանուած են 101 գիւղացիներ, ուսուցիչներ, աշակերտներ, քահանաներ ևն. տեղիս են ունեցել 40 բռնաբարումներ։ Զոհերից շատերին անդամատում են դեռ ողջ ժամանակ, յաճախ գլուխները կտրելով՝ իցոյց են հանում՝ ժողովրդին ահաբեկելու նպատակով։ Մօտ 50 հոգի վիլայէթի գիւղացիներից բանտարկուած են. մի քանի տասնեակ գիւղեր թալանի ու կրակի են մատնուած այդ կարճ ժամանակամիջոցում։ Թիւրք աւազակային խմբերը խրախուսուած կառավարութիւնից՝ արձակ-համարձակ կատարում են իրենց շահատակութիւնները։ Կազմակերպուել է թիւրքաց բոքսէրների մի դաշնակցութիւն՝ մակեդոնական յեղափոխականների գործունէութեանը դիմագրաւելու համար...

Զարմանալի չէ, որ յուսահատ գիւղացիք վրէժխնդրութեան ծարաւից մղուած՝ խմբերով դիմում են դէպի լեռները և յարձակողական դիրք բռնում այնտեղից։

Դրսից շարունակ ներս են արշաւում Սարաֆովի զինուած խմբերը և թիւրքերի հէն կուսի բռնուելով՝ կոտորում ու կոտորուում են։

Ապստամբական շարժման ալիքները ծաւալուում են հետզհետէ և արագութեամբ. ընդհանուր ապստամբութեան վտանգը ստիպում է թիւրք կառավարութեանը՝ կենտրոնացնել զինուորական մեծ ուժ Մակեդոնիայի մէջ։

Ֆլբանիայում.— Մակեդոնական խնդրի հետ միասին զբաղուր Բալկանների վրայ սպառնական կերպարանքէ առնում ալբանական խնդիրը, ուր շահագրգռուած են Ցունաստանը, Իտալիան, Մոնտենեգրոն, Աւստրիան։ Ալբանական յուզումների մասին շատ գրուեցաւ վերջերս։ Ցեղափոխական գոյն ունեցող հրատարակութիւնները բազմանում են արտասահմանում, գրեթէ բոլորն էլ առաջ են մղում զինուած կուի պրոպագանդը և ընդունում են իբր նշանաբան՝ Ալբանիան ալբանացիներին։

Ինչպէս ալբանական այլևայլ կազմակերպութիւնների պարագլուխները մթանալով՝ ուղղել են սուլթանին մի նամակ, որի մէջ ասուած է հետևեալը.

„Ձերդ Մեծութեան գովանաւորութեան տակ մենք վճռել ենք ձեռք բերել մեր իրաւունքները և պաշտպանել մեր ազգայնութիւնը մինչև մեր արեան վերջին կաթիլը...

„Բայց եթէ Ձերդ Մեծութեան կառավարութիւնը ժամանելով ներկայ սիստէմի մէջ՝ խուլ մնայ մեր պահանջների հանդէպ, ապա թող իմանայ Ձերդ Մեծութիւնը, որ ալբանական ժողովուրդը պատրաստուած է դիմաւորելու ամենչոչնչաչակ պատահականութիւնների. իսկ եթէ Ձերդ Մեծութիւնը այժմ, ինչպէս միշտ, ոչինչ չի կարող անել ալբանացիների վտանգուած գոյութիւնը փրկելու համար, արն ժամանակ Աստուծոյ օգնութեամբ և մեզ վրայ միայն յուսալով՝ մենք պատրաստ ենք գործել"։

Մակեդոնական կոնգրէսը.—Ամէն անգամ մակեդոնացի յեղափոխականների կոնգրէսը մեծ աղմուկ է յարուցանում եւրոպայի մէջ. այս տարուանը սպասում էին աւելի մեծ անհամբերութեամբ, ինկատի ունենալով երկրի ալէծուփ վիճակը և մի շարք ներքին խնդիրներ։ Սպասուում էր կատարեալ խզուած Սարաֆովի խմբի և գեներալ Զօնչեվի միջև, որը, ինչպէս ցայտնի է, վերջին տարւայ ընթացքում պարագլուխն էր մակեդոնական պաշտօնական կոմիտէի։ Այդպէս էլ եղաւ։

Կոնգրէսը գումարուեց օգոստոսի 10-ին Բոլգարիայի մայրաքաղաքում։ Կառավարութիւնը նախագուշութեան ընդարձակ միջոցներ էր ձեռք առել. Սոֆիան պաշարուած քաղաքի կերպարանք ունէր։ Կոնգրէսին ներկայ էին 60 պատգամաւոր ներսի և դրսի խմբումներից։ Նիստերը — աղմկալից, փոթորկոտ — տևեցին 8 օր։ Երկու հակամարտ տարրերը տենդային պայքարի բռնուեցին. մի կողմից՝ յեղափոխականները (Սարաֆովի խումբը), որոնք պաշտպանում են զինուած կուի տակտիկան Մակեդոնիայում. միւս կողմից՝ խաղաղականները (Զօնչեվ-Միխայլովսկի ևն), որոնք դատապարտելով յեղափոխական միջոցները՝ ձգտում են լուծել Մակեդոնիայի հարցը խաղաղ, դիւանագիտական ճանապարհով։

Մեծամասնութիւնը յայտնուեց Սարաֆովի կողմը և ընտրեց ճարտարապետ Ստանիշեվին իբրև նախագահ։ Փոքրամասնութիւնը, իհարկէ, չհամակերպեց և շարունակում է իր գործունէութիւնը, իբրև առանձին կազմակերպութիւն։

Միջամտեցին, փորձեր արին հաշտեցնելու երկու կուսակցութիւնները, — ապարդիւն։ Առաջարկեցին 4-ական հոգի մտցնել բարձր կոմիտէի մէջ, նշանակել պրոֆէսոր Միխայլովսկուն՝ նախագահ, իսկ երկու հակառակորդներին—Սարաֆովին ու Զօնչեվին—փոխ-նախագահներ, որպէս զի այդպիսով առնչ գար կուսակցութիւնների

ձուլումը. Համաձայնութիւն չեղաւ։ Տակտիկայի խնդրից դուրս՝ մեծ դեր էր խաղում անձնաւորութիւնների խնդիրը։ Միանգամայն յեղափոխական նկարագրի տէր մարդիկ, որպիսիք են Սարաֆով, Դելչեվ, Ստանիշէվ և ն, չէին կարող հաշտել բանաստեղծ-պրոֆէսոր Միխայլովսկու, գեներալ Զոնչեվի և նման թուլամորթ օպպորտիւնիստ ուժերի հետ, որոնք սովոր լինելով խաղաղ ու փափուկ կեանքի, գարշելով կուի փրկարար պրոպագանդից՝ ուզում են յանձնել Մակեդոնիայի գատը դիւանագիտական անվերջ խաղերին։

Խզումը անխուսափելի էր և միանգամայն ցանկալի։ Պէտք է ծափահարել կոնգրէսի մեծամասնութիւնը կազմող տարրերին, որոնք արձագանք տալով տանջուող ժողովրդի տրամադրութեանը՝ պիտի համախմբուեն յեղափոխական դրօշակի շուրջը և պիտի մղեն յաղթանակով ազգային ազատութեան կուիւը։

„POUR L'ARMÉNIE"

(„ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ")

Այդպէս է վերնագիրը մի լուրջ, պատկառելի գրուածքի, որ Պիէռ Կիառ հրատարակեց Բրիւսէլի կոնգրէսի նախընթաց օրը։

„Ես ցոյց կը տամ—ասում է Pro Armenia-ի խմբագրապետը—թէ ինչ է հայերի այժմեան վիճակը, ես կը հաստատեմ, որ այդ վիճակը ծանրանում է ցէցօր և որ այդ ժողովրդի ոչնչացումը առաջ է տարւում մեթոդիկ նախագծով։

Ես կ'աշխատեմ այնուհետև ջնջել հրապարակի վրայ շրջող մի կարգ առասպելներ ու նախապաշարումներ, երբեմն հակասական, ինչպէս օրինակ այն՝ որ իբր հայերը մեծամասնութիւն չեն կազմում Թիւրք կայսրութեան ոչ մի մասում. որ նրանք բոլորն էլ վաշխառուներ են, դրամ մաժող. որ նրանք անբուժելի երկչոտութեամբ՝ անընդունակ են ինքնապաշտպանութեան. որ նրանց յեղափոխական շարժումները օժանդակւում են Ռուսաստանի կամ Անգլիայի կողմից։

Ես ցոյց կը տամ, վերջապէս, թէ ինչ միջոցներով կարելի է դեռ փրկել հայ ցեղը լիակատար բնաջնջումից։

Ահաւասիկ այն բազմազան—վարչական ու զինուորական—միջոցները, որոնցով ձգտում են վերջնականապէս ջնջել հայերին.

1. Հաղորդակցութեան կաշկանդում՝

Արգելւում է հայերին ոչ միայն Թիւրքիայից արտասահման գնալը, այլ նոյնիսկ երթևեկել գաւառից գաւառ, քաղաքից քաղաք, գիւղից գիւղ։ Հենուապէս հայի առևտուրը բոլորովին կաշկանդւած է, և երբ վարչական միջոցներով սով է կազմակերպւում ներսում, շատ դիւրին է սովամահ անել մեծ թիւով մարդիկ։ Այդպէս էր Վանի սովի միջոցին 1896 և 97 թուականներին։

2. Հարկահանութիւն

Հարկահաններ են՝ թէ Թիւրք կառավարութիւնը և թէ քրդական աշիրէթները, որոնք դարերից իվեր սովորել են իրենց ստրուկ ճանաչել հայ ազգաբնակութիւնը։

Կիառ նկարագրում է ծեծի ու բռնաբարութեան սիստէմը, որ գործ է դրւում հարկերը հաւաքելու միջոցին։

3. Ոստիկանութիւն և բանտ

Կիառ պատմում է շատ բնորոշ դէպքեր ոստիկանական շահատակութիւններից, նկարագրում է բանտային ռէժիմի սարսափները, որ նա քաղում է մեծ մասամբ անգլիական Կապոյտ Գրքերից։

4. Մահմեդական գաղթականների հաստատումը

Այն վայրերում, ուր հայ ազգաբնակութիւնը, չնայած ահռելի ճնշումներին՝ դեռ ընդունակ է ինքզինքը պաշտպանելու, — կառավարութիւնը բնակեցնում է մահմեդական գաղթականներին, որոնք սեփականազուրկ են անում հայ հողատէրերին։

5. Բռնի յափշտակութիւններ, մասնակի սպանութիւններ, աւազակութիւններ

Պատմում է Կիառ, յենւելով Բարկէն վարդապետի տեղեկագրի վրայ, թէ ինչպէս վերջին տարիների ընթացքում թիւրք ու քիւրդ աղաները կողոպուտի են մատնել ամբողջ Բիթլիսի շրջանը. պատմում է նաև մանրամասն, աղեխարշ փաստերով — Հայաստանի ներքին վայրերում շարունակ կատարւող բռնագրաւումները։

6. Մասսային ջարդեր

Մանր սպանութիւնների սիստէմի հետ միասին տաճիկ կառավարութիւնը բնաւ աչքից չի թողնում խոշոր ջարդերի ծրագիրները։ Ամենամեծը դրանցից Խաստուրի կոտորածն էր՝ 1900 թ. հոկտեմբերին։

Կան երկու վայրեր, որ կառավարութիւնը առանձին ջանքեր է թափում բնաջինջ անելու հայ համայնքները, որոնք դեռ կարող են լուրջ դիմադրութիւն ցոյց տալ— դա Զէյթունն է և Սասունը։

Կիառ երկարօրէն կանգ է առնում մասնաւորապէս Զէյթունի վրայ, պատմում է նրա կուիւներն ու յաղթութիւնները։ Մանրամասն է լինում Զէյթունի շուրջը կառուցւող զօրանոցների վրայ։ Ջարդի պատրաստութիւնները տեսնւած են. սուլթանին մնում է միայն ընտրել յարմարագոյն վայրերը...

Միևնոյն մեթոդը կիրառւում է Սասունում։ Սասունցիք ևս Տավրոսի առիւծների պէս ըմբոստ, ազատասէր՝ գիտեն դիմադրել թշնամու յարձակումներին։ 1894-ից իվեր կառավարութիւնը, իր հին տակտիկով, ձգտում է ցած բերել լեռնցիներին դէպի Մուշի դաշտը՝ այնտեղ խմբովին ջարդելու նպատակով։ Խմբական ջարդեր կատարւում են պարբերաբար այդ կողմերում։ զօրանոցներ այդտեղ ևս կառուցւում են՝ Սասունը վերջնականապէս ընկճեցնելու համար...

Այնուհետև Կիառ հիմնական փաստերով ջրում է հայերի մասին տարածւած առասպելները. յիշեցնում է, որ այսպէս կոչւած „սֆրրաֆիները" մի չնչին տոկոսն են կազմում հայ ազգաբնակութեան, որը էապէս երկրագործ, աշխատաւոր մի տարր է թէ Թիւրքիայում և թէ Ռուսաստանում։

„Հայկական երկչոտութիւնը" չափազանցւած է. հայ շարժումների մէջ անթիւ են հերոսութեան ու անձնուիրութեան օրինակները։ Կիառ յիշատակում է հայկական դիւցազներգութեան գլխաւոր դրուագները։

Հայ շարժումները ռուսական կամ անգլիական ինտ-

րիգներին վերագրելը նոյնպէս ջարդիտ դրպարտութիւն է։ Ռուսաստանի իսկական դիրքը դէպի հայ յեղափոխականները պարզելու համար՝ գրքի հեղինակը բերում է անժխտելի ու պերճախօս փաստեր — Կուկունեանի դէպքը, անթիւ բանտարկութիւններն ու հալածանքները։

Եւրոպական միջամտութեան դէմ եղած բոլոր առարկութիւնները անհիմն են. „ընդհանուր եւրոպական պատերազմի“ վտանգը երեւակայական է։ Ռուսաստանի կամ ոեւէ ուրիշ պետութեան դիմադրութիւնը չի կարող արգելք լինել հայոց հարցի լուծման։ Ինքը Դելկասէն ցոյց տուեց, որ այդ երկիւղը ցնորական է։ Երբ պէտք էր սուլթանի վզին կապել Արեւելքի ինքնավարութիւնը, Գերմանիան ու Աւստրիան բացարձակապէս դէմ էին հելլէնների ցանկութեան, իսկ Ռուսաստանը շատ քիչ նպաստաւոր։ Անգլիան, Իտալիան և Ֆրանսիան լիակատար համաձայնութեան եկան՝ խլելու յաղթող սուլթանից իր կայսրութեան մի գաւառը։ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրը կորովի կերպով և գոլելի վճռականութեամբ ընդունել տուեց իր կարծիքը „բարեկամ պետութեանը“ և սուլթանը զիջեց հենց Հոյն վայրկեանին, երբ նրա հովանաւոր Վիլհելմ կայսրը մեծ շուքով Պոլիս էր մտնում։

Բերլինի դաշնագրի յօդուածները գործադրել տալու համար՝ անհրաժեշտ չէ անգամ, որ բոլոր եւրոպական պետութիւնները համաձայնին։ Բաւական է միայն նրանցից մի քանիսի համաձայնութիւնը՝ հայ ժողովուրդը կատարեալ բնաջնջումից փրկելու համար։

—

Գիրքը պարունակում է բացի դրանից բազմաթիւ հետաքրքրական դոկումենտներ հայ յեղափոխական պատմութիւնից, յեղափոխական կոմիտէների այլեւայլ առիթներով հրատարակած մանիֆէստները. նաև Օսմանեան բանկի գրաւման դէպքը՝ պատմած մի ականատեսից. ապա 1895 թ. մայիսի հոչակաւոր Մէծօրանդում մի բնագիրը, վերջապէս ռէֆօրմների այն մինիմալ ծրագիրը, որ սրանից մի տարի առաջ մշակուած էր Հ. Յ. Դաշնակցութեան Արեւմտեան Բիւրոյի կողմից և Պիէռ Կիառի միջոցով ներկայացրած մինիստր Դելկասէին։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ՅԱՏԿՈՒՆ ՄԱՐԴԿԱՅՆՈՒԹԵԱՆ“

Այս վերնագրով տիկին Սեվրին մի ընդարձակ յօդուած է զետեղել Պարիզի Le Journal թերթի մէջ, որ քաղաքօրէն առաջնակարգ բերում այստեղ։ Յօդուածը գրուած է Մամուլի Միջազգային Կոնգրէսի և „Հայ Ուսանողական Միութեան“ ներկայացրած զեկուցագրի առթիւ։

«Այն դժուարութիւնը, որ ես հրատարակում եմ այնմիջոց, որի կարեւորութիւնը ոչ ոքի աչքից չի վրիպի փաստ, գալիս է իմ օտար թերթերին ուղղուած զրոյցներից—իմ ձեռքումն է գտնուում յուլիսի 2-ից իվեր։

Ես այն չհրատարակեցի աւելի շուտ, որովհետև այդպէս էի խորհուրդ տալիս Մամուլի վերջին Կոնգրէսի ղեկավարող Յանձնաժողովին. յետոյ կը բացատրեմ ես պատճառները։ Ես կատարեալ իշխանութիւն ունեի ինքս անձամբ արկածի մէջ խօթելու. քանի որ նախաձեռնութիւնը գալիս է ինձնից և միայն ինձնից։ Եթէ ես չնչտում եմ այդ վերջին մանրամասնութեան վրայ, դա մանկական մի հաճոյքի, իմար անապահովութեան համար չէ, այլ միայն ժեսի ամբողջ պատասխանատուութիւնը ինձ վրայ առնելու համար։ Միայն ես արդէն հնձ դեռ էլ չունիմ այստեղ. հարիւր կոչերը են ուրիշ պնդաւորութիւններ հարկաւոր են ուրիշ տեսակ անցքեր՝ խռովելու համար վիճանակների հանդիստութիւնը եւ եւրոպական հաւասարակշռութիւնը։

Ես այդտեղ պարզապէս, ինչպէս միշտ, կատարել եմ կնոջ աշխատանք,—կին, որ չէ կարող իմանալ առանց սարսուռի, թէ ինչպէս խողխողում են ուրիշ կանանց ու փոքրիկ երեխաներին, թէկուզ հէնց լինեն նրանք օտար, հեռաւոր անայլայլ. գրողի աշխատանք — գրող, որ իր պատասխանատուութեան գիտակցութիւնն ունի կը, որ չէ կամենում, նոյնիսկ զանցառութեամբ, զգալ իր ձեռքի վրայ Մակբեթի բիծը։

Լռելը ամենայարմարն է վատութիւններից, ամենահանգստաւէտը, ամենալաւ վարձատրողը մեր արհեստի մէջ, բայց եւ ամենամեծը վատութիւններից։

. . . . . .

Եմ այն մարդկանցից եմ, որոնց պէտք է սպանել, երբ ստրկական պայմանումն է թագաւորում։ Եթէ նրանց գլուխը կոտրուած է, նրանք դիմում են ազատ խօսքին։ Եթէ բեմն են խլում նրանից—հրապարակը նրանց առջեւն է։ Եթէ լեզուն դուրս քաշեն նրանց բերանից, ապա նրանց դողդողուն ձեռները մի կտոր ածուխ կ'առնեն եւ հրապարակի պատի վրայ կը գծեն վրէժխնդիր ազդագիրը։

Ոչ ոք, ուրեմն, չէր կարող արգելել ինձ գործել։

. . . . . .

Ես գալիս էի Բրիւսէլի Հայաստէր Կոնգրէսից դեռ դգդահար՝ այդ տարիի ու գաղտնային փորոտութիւններից, որոնք յիշած էին այնտեղ. . .

Եւ ահա Բերլուում, Դաշնակցական պալատի նրբանցքներում տեսնում եմ երկու զուսնատ երիտասարդներ, որոնք մտածել, գիտել, ռեւոլուցիոնարել են խնդիրը իր ամբողջ առաջադիմութեան ընթացքում, եւ որոնք իրենց դասի համար որոշ յոյսեր էին դրել դրողների այս միջազգային կոնգրէսի վրայ. . .

Եւրոպայի հայ ուսանողական Միութիւնը ուղարկել էր Կոնգրէսի բոլոր անդամներին մի շրջաբերական, ուր տեխնիկական սկզբնաւորութեանը հետեւում է կոչ.

«Ամենահռելի տագնապի միջոցին հայ ժողովուրդը միայն կոչ էր անում քաջաբար թաքած ճարտարութեանը. հայկական ջարդերի շրջանը կազմակերպել էր լռութեան մի դաւադրութիւն». . .

Կան վերլուծեցումներ, որոնք կոչտ են հնչում. նրանք կամ խղճահարութիւն են յարուցանում կամ թէ զարթեցնում են յիշողութիւններ կրած լծի, կրծուած սանձերի մասին։ Խմբագրողը դիպլոմատ չէ եղել։

Այնքան դիպլոմատ չէ նա, որ մի վերջոյ թոյլ է տալիս իրեն գործածել մի մականուն փոխառուած Գլադստոնից. . .

Մէկէն ի մէկ ճակատները կնճռոտուեցին։ Այն, ինչ որ թոյլ է տրուում մի մինիստր նախագահի՝ ներելի չէ երիտասարդների մի կոմիտէի, որոնք արդէն սպառոյ նպաստում են դեռ, որ ամէն մի սուրհանդակ գուժէ նոր կոտորած իրենց հայրենակիցների, բարեկամների, ծնողների. . .

Ղեկավարող Յանձնաժողովը (իր մեծամասնութեամբ, սակայն, յուզուած ու հուսակիր) հրաժարուեց ամէն միջամտութիւնից, իբրեւ կոնգրէս կամ իբրեւ կոնգրէսիստներ։ Նրա դերը դժուար էր, անշնչուտ, ինկատի առնելով գերմանական պատգամաւորների թշնամական դիրքը Հայաստանի վերաբերմամբ։

Մինչեւ իսկ Յանձնաժողովի անդամներին խնդրուած էր ձեռնպահ մնալ անձնական ոեւէ գործողութիւնից։ Երեք հոգի ազատ մնացին հրահանգից, երեք ներկայացուցիչներ այն ափոքրիկ ազգութիւնների, որոնք յաճախ մեծահոգութեամբ դասեր են տալիս ուրիշներին. գնդապետ Է. Սրկրեան, Լօգանից, մէկը երեք փոխնախագահներից. Հայցիոն-Սաֆինոս, Անվէրից, եւ Կարլ Կնեանսօն, Կիպէնհագից. պարտք եմ համարում սրտանց շնորհակալութիւն յայտնել նրանց։

Մի անգամ եւս պէտք էր դիմել անհատական նախաձեռնութեան, որ միակ բեղմնաւորն է, քանի որ նա դնում է մարդուն, ազատ ամէն տեսակ կապերից, սոսկ իր խղճի դիմաց։

. . . . . .

Ապա առաջ բերելով բազմաթիւ ստորագրութիւնների ցուցակը, որ նա հաւաքել էր բոլոր երկրների պատգամաւորների շարքերում, տիկին Սեվրին յիշեցնում է վերջին տխուր հեռագիրը Սասունից ու բացականչում.

«Օգնութի՛ւն, հրապարակախօսնե՛ր բոլոր երկրների, յանուն մարդկայնութեան»։

* * *

„Պրօ Արմենիայի“ երկու վերջին համարներում Պիէռ Կիառ բանակոիւ է մղում գերմանական *Kölnische Zeitung*-ի դէմ, որը, ինչպէս յայտնի է, բացասական դիրք էր բռնել դէպի Բրիւսէլի կօնգրէսը, համարելով այդպիսի կօնգրէսները վնասակար նոյն իսկ հայկական դատի համար։

„Հայերի համար վտանգաւոր է—ասում է գերմանական քաղաքականութեան պաշտպան օրգանը—այնպիսի մի գաղափար տալ օսմանեան իշխանութիւններին և ազգաբնակութեանը, թէ իբր քրիստոնեայ Արևմուտքը պատրաստում է խաչակրաց արշաւանքի պէս մի բան՝ ընդդէմ մահիկի։ Պէտք է զգուշանալ դիւանագիտական անխոհեմ քայլերից, որոնք կարող են կարծել տալ Փոքր Ասիոյ մահմէդականներին, թէ հայերին ուզում են իրենց տէր դարձնել։ Եւ անցեալի մէջ դիւանագիտութեան սխալն է եղել՝ պահանջել բէֆորմեր միմիայն քրիստոնեաների համար և չմտածել մահմէդականների մասին, որոնք ճնշած են նոյնպիսի ծանր բեռի տակ“։

Այդ պատճառաբանութիւնը նոր չէ։—պատասխանում է Կիառ—նա հնարած է հէնց Եըլդըզում, և Եըլդըզից են տարածուել կոտորածի հրահանգները մահմէդական ազգաբնակութեան մէջ... Պօլսի վերջին ջարդերի ժամանակ իբր թէ կատաղած ժողովուրդն էր բնազդով հալածում հայերին և կոտորում նրանց փողոցների մէջ։ Սակայն ժողովուրդը հանդարտուեց՝ հէնց որ դեսպանների հաւաքական դիմումը նախազգուշացրեց մուլթանին, որ իր թագը և անձը վտանգի մէջ են, եթէ Կոտորածը չդադրի։

Եըլդըզից էր նոյնպէս, որ հաւատացրին մահմէդականներին, թէ ռէֆորմները իբր ուղղած են նրանց դէմ. բայց պետութիւնների համար դիւրին է հասկացնել իրենց հիւպատոսական գործակալների միջոցով, որ մտադրութիւն չկայ ներկայ բռնապետութիւնը փոխարինելու քրիստոնեայ բռնապետութեամբ։

Սկզբունքի առարկութիւններ անելուց յետոյ, գերմանական լրագիրը ցոյց է տալիս „դարմանները“։ Ահռելի թշուառութիւնը մեղմելու համար, ասում է նա, անհրաժեշտ է տեղական գործունէութիւն։ Գերմանացիք, որոնք ծախսել են և շարունակում են ծախսել մեծ գումարներ յօգուտ կոտորածի զոհերի, յաջողել են օգտակար գործ շինել մանաւանդ Ուրֆայում ու Մարաշում.։

Անշուշտ, պատասխանում է Կիառ, գովելի է գերմանացիների ձեռնարկած գործը Ուրֆայում և Մարաշում, սակայն խնդիրը վերաբերում է բուն հայկական նահանգներին, որոնց մասին կարծէք տեղեկութիւն չունին հայոց բարեգործները։ Վերջապէս, կէս-միջոցներով, պալլիատիվներով չէ, որ պիտի փրկուի հայ ժողովուրդը...

Բաւական չէ որբանոցներ հիմնել և ապրեցնել թիւրք կառավարութեան զոհերից մի քանիսին։ Աւելի ստիպողական է՝ արգելել սուլթանին նոր որբեր առաջացնելու և ոչնչացնելու նրանց, որոնց ժամանակաւորապէս խլել են մահուան ճանկերից։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Եւրոպական թերթերը յաջորդաբար հաղորդեցին հետևեալ երեք հեռագիրները.

Կ. Պոլիս 29 օգոստ. — Պալատի մէջ հայոց պատրիարքին յայտարարեցին, որ հայերու վիճակին բարելաւման վերաբերեալ իր իղձերը (desiderata) նկատի առնելէ առաջ, անհրաժեշտ է մատուցանել իր կողմէն ուղերձ մը, որ հայերու օրինականութիւնն ու հաւատարմութիւնը երաշխաւորէ։ Պատրիարքը անմիջապէս քաղաքական ու կրօնական ժողովները գումարեց եւ երէկ պալատ ղրկեց պահանջուած ուղերձը։

Կ. Պոլիս 2 սեպտ. — Երէկ հայոց Մայր-եկեղեցիին մէջ սուլթանի գահակալութեան տօնին առթիւ կատարուած կրօնական արարողութեան միջոցին, պատրիարքը ժողովուրդին ծանուց հրատարակութիւնը իրատէի մը, որ հայերու նկատմամբ ձեռք առնուած բոլոր սեղմիչ միջոցները կը ջնջէ։

Սպասելով այս իրատէի գործադրումին, պատրիարքը ինքզինք զոհացած նկատելով՝ պարտք համարեց իր հրաժարականը ետ առնել եւ պալատ երթալ սուլթանը շնորհաւորելու եւ անոր շնորհակալութիւն յայտնելու համար։

Կ. Պոլիս 4 սեպտ. — Հայերու դէմ ձեռք առնուած սեղմիչ միջոցներու ջնջումը հրապարակող եւ պատրիարքին պահանջները գոհացնող իրատէն դեռ չէ հրատարակուած։

Հայերը կ'ամբաստանեն Օրմանեանը թէ՝ Դրան հետ միացած ղիրենք կը խաբէ եւ բուռն կերպով կը պնդեն որ վերջնապէս հրաժարի ու գաւառական վանք մը քաշուի։

Կովկասի հայ թերթերը կը հաղորդեն թէ — կառուսահպատակութիւն ընդունելու եւ կամ ռուսական սահմաններէն հեռանալու համար—ռուս կառավարութեան կողմէ տաճկահայ գաղթականներուն տրուած վերջնական պայմանաժամը օգոստ. 23-ին աւարտած լինելով՝ գաղթականներու ստուար թիւ մը դէպի Հայրենիք կը մեկնի։ Մնացողները բռնի ռուսահպատակ պիտի գրուին։

ՏԵՌՕՐ

Օգոստոս 6 չորեքշաբթի առաւօտ ժամը (ը. ե.) 9½-ին Զմիւռնիա՝ Թօփալեան եղբարց մեծ վաճառատան մէջ՝ դաշնակցական ահաբեկիչներու ձեռքով տէռօրի ենթարկուեցաւ նշանաւոր ժանտիչ Գաբրիէլ Տէրմանիկեան։ Ահաբեկիչները ազատ են։

ՄԱՀՈՒՕՅԺ

Բաթումից հաղորդում են մեզ.

Յուլիս ամսում Զորափորի մէջ կարճատև հիւանդութիւնից յետոյ մեռաւ Կարապետ Գորգինեանը. հանգուցեալը կարճ ժամանակամիջոցում կարողացել էր հաւաքել իր շուրջը երիտասարդների մի ստուար խումբ, որոնց մէջ ներշնչել էր հայրենասիրական-յեղափոխական եռանդ։ Նրա մահը զգալի կորուստ է տեղական պրոպագանդի համար և նրա յիշատակը միշտ անջնջելի կը մնայ իր ընկերների շրջանում։

ՆԻՒԹԱՏՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

ԱՄԵՐԻԿԱՅԻ Լօրէնս քաղաքից՝ Մարտիկեանից 100 ֆրանք, ԹԵՀՐԱՆԻՑ (Պ. Տիգ.-ի միջոցով) 976 ֆր., ԳԱՀԻՐԷԻՑ Օ. Թում.-ից 6 ֆր., գրքերի վաճառումից 19. 85 ֆր., ԳԱՀԻՐԷԻՑ Զինավարժ. Ընկ.-ից 38. 20 ֆր., ԼՕՆԴՕՆԻՑ Փարնատ 12. 60 ֆր., ՊԱՐԻԶԻՑ Կ. Բ.-ից 3. 20 ֆրանք, ԲԱԿ. Կենտ. Կոմիտէից 1000 ֆրանք: Գումար 1155 ֆրանք 85 սանտիմ:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿ. II (ՋՐԱՐ.-Ի) Կ. ԿՕՄԻՏԷՆ՝

№ 7 տեսրով (1902, մարտ 23-ից).

№		№	
320	Բերն. գաղթականներից 5 ռուբլի,	335	Բարձրավանդակ գ. Նէր 169. 90 ռուբլի,
321	Րթեղ.-յունվ.-փետ.-մարտ ամսվձ. Գասպետ 1. 50,	336	Անառիկ գ. Նէր 67. 45 ռ.,
322	Անապատից 209 ռ.,	337	Մեղրի գ. 59 ռուբլի,
323	Առաք. Ղանդ. 2 ռ.,	338	Բժտ. Ազատշէն խ. 20 ռ.,
324	Տ. Պող. Մոթոսեան 5 ռուբլի,	339	Զողղնից տարեմտ. 20 ռ.,
325	Տ. Արս. Կիր. 3 ռուբլի,	340	Փուշ գ.-ի տեղ. կամ. 25 ռ.,
326	Որսորդ խմբ. 3 ռ.,	341	Փուշ գ.-ի Զինուոր խ. 40 ռ.,
327	Տիկ. Մար. Նալբ. 4 ռ.,	342	Ընդարձանի Բարեսիրտ խմբ. 4 ռուբլի,
328	Գետափ գիւղ 12 ռ.,	343	Պարտիզի Հաւատարիմ խմբ, 5. 60 ռուբլի,
329	Խ. եւ Մ. Նալբ. 60 ռուբլի,	344	Ճերմակ ծորից 10 ռ.,
330	Օր. Գայիանէ 1 ռ.,	345	Դրունք գ. 12 ռուբլի,
331	Լեռնավայր գ. 40. 15 ռ.,	346	Դրունք գ.-ի խմբի հիմնադրամ 34 ռուբլի,
332	Ոստան գ. 105. 80 ռուբ.,	347	Ցանցոտ գ. 40 ռուբլի,
333	Գետափ գիւղ 50. 5 ռ.,	348	Ակնքաղաք գ. 30 ռուբլի,
334	Ծովակ գ. 20. 95 ռուբլի,	349	Ճանապարհ գիւղ 26 ռ.,

Մի՛ այլ տեսրով.

Արեգ գիւղից 7 ռուբլի, Բարձր գ. 15, Քարափ գ. 15, Ընդարձակի տեղ. կամ. 50, Փարիզի Անդաստան խմբ. 5, Առուակի Ուրսուս խմբ. 10, Միջանձորից 28, Առիւծ գիւղի տեղ. կամ. 20, Թարթառ գ. Դայեր խ. 5 38, Բլուր գ. 10. 50 ռուբլի:

№ 9 տեսրով.

№		№	
401	Ալբմաւիր գ. Արծիւ խ. 5 ռ.,		խ. 2. 70 ռ., Ամուլի խմբ.
402	Նորեկ գ. ժողովարարութեան թերթով (№ 176) Խանի ձեռամբ 100 ռ.,		3. 80 ռ., Փոփոխական խմբ. 1. 15 ռ. (ընդհանուր գումար 16. 45 ռ.),
403	Նախընթաց գ. Ս. 20 ռ.,	411	Նախագործ գ. Նէր 18. 88,
404	Որմիզդ գ. կամ. 45 ռ.,	412	Փայուն գ. 2 ապա. 10 ռ.,
405	Տղմուտ գ. Նէր 20 ռ.,	413	Կիկերոնի տ. կ. 12. 78 ռ.,
406	Ուղղղու գ. 11. 15 ռ.	414	Կարմրուտ գ. տ. կամ. 6 ռ.,
407	Կղզի գ. կամ. 6. 70 ռ.,	415	Կարմիր վանք գ. 4 ռ.,
408	Կղզի գիւղի խմբ. 4 ռ.,	416	Պ. Գ. Շ-եանից յունիս ամսական 10 ռուբլի,
409	Շերամի գ. կամ. 14 ռ.,		
410	Նախագործ գիւղի Ար. խմբ. 8. 80 ռ., Ցարգելի	417	Փարիզի տեղ. կամ. ապրիլ ամսական 10 ռ.:

№ № 417—447. Պարտիզանում հանգանակուած տեղ. կամ. եւ Խանի միջոցով Ա. Պ. 100 ռուբլի, Մ. Բ. 60, Գ. Ժ., Ի. Տ. Օ., Մ. Ց., Օ. Խ., Մ. Ղ., Ս. Ջ. 50-ական, Ա. Մ. 40, Կ. Դ. 40, Զ. Ա. 30, Մ. Ղ., Մ. Ղ., Օ. Շ., Պ. Ա., Գ. Ա., Մ. Ս., Պ. Ա., Մ. Ն., Գ. Բ. 25-ական, Լ. Ա. 20, Ց. Թ. 20, Թ. Զ., Պ. Ք., Փ. Կ., Օ. Մ., Մ. Ց., Օ. Տ. Գ., Խ. Մ. 15-ական, Ա. Ք. 11, Հ. Խ., Հ. եւ Ընկ., Մ. Ն., Խ. Ք., Պ. Ք., Ց. Ք., Ա. Ք., Ս. Փ., Ց. Ա., Մ. Ց., Վ. Ս., Պ. Գ., Մ. Մ., Մ. Ղ., Կ. Մ., Հ. Մ., Պ. Ց., Ա. Բ., Կ. Ս., Գ. Վ., Ի. Բ. 10-նական, Հ. Դ., Ց. Ա., Մ. Թ. 8-ական, Ց. Խ., Կ. Տ. Ս., Ց. Մ., Ա. Դ., Ա. Վ. 7-ական, Ց. Զ., Ս. Օ., Հ. Հ., Պ. Մ., 6-ական, Ն. Շ., Ց. Վ., Մ. Ժ., Ց. Մ., Ս. Պ., Մ. Ա., Օ. Կ., Մ. Ց., Բ. Գ., Ս. Ղ., Զ. Պ., Մ. Ս., Ա. Մ., Թ. Ա., Ա. Ա., Ց. Ս., Ս. Մ., Խ. Շ., Թ. Ց., Վ. Տ. Ս., Խ. Ց., Բ. Կ., Մ. Մ. 5-ական, Ա. Շ., Խ. Ղ., Ա. Կ. 4-ական, Մ. Մ., Ա. Մ., Ց. Ց., Ց. Մ., Մ. Մ., Ց. Ս., Գ. Գ., Տ. Խ., Ց. Ց., Պ. Ղ., Գ. Ա., Պ. Տ. Գ., Օ. Մ., Ա. Ց., Օ. Վ., Ն. Օ., Ա. Մ., Գ. Ա., Պ. Ա., Ա. Ղ., Կ. Թ., Ե. Ց., Պ. Զ., Ա. Ս., Ս. Ն., Գ. Ն., Մ. Ա., Զ. Գ. 3-ական, Խ. Ղ., Մ. Ք., Կ. Ի., Մ. Զ., Ն. Մ., Գ. Ա., Ղ. Շ., Ս. Վ., Հ. Շ., Կ. Մ., Հ. Ք., Ս. Շ., Ղ. Բ., Պ. Ժ. 2-ական, Ա. Ք., Ց. Վ., Մ. Ց. Վ., Ա. Ֆ., Մ. Ի., Ս. Դ., Փ. Ս., Ֆ. Ղ. 1-ական, Գ. Ց. 1. 60, Ա. Ս. 1. 50, Թ. Տ. Գ. 25 կոպ., Ա. Կ. 20 կոպ., չորս աշակերտներ 20 կոպ.: Պարտիզանի հանգ. ընդհանուր գումար 1484 ռուբլի 75 կոպէկ:

№ 448. Ամառանոցի „Ցոյսից“ 20 ռուբլի, № 449. Ամառանոցի Երիտասարդական խ. 80 ռուբլի:

№ 10 տեսրով.

№		№	
451	Փայլնցի Ս. Կ.-ից տուգանք 10 ռ.,	454	Ն. Ծալ.-ից 29. 95 ռ.,
452	Ն. Ճամբորդ գ. կամ. 32 ռուբլի,	455	Ծպ.-ի գաղթականների 13. 30 ռուբլի,
453	Ն. Առուայ գ. կամ. 9. 90 ռ.,	456	Ճամբորդի ինքը անձն. Նէր 10 ռուբլի,

№ № 457—470. Աղօտում հանգանակուած տեղ. կոմիտէի եւ Մուրադի միջոցով Պ. Պ. Միութիւն եւ Ծաղիկ 20-ական, Ճարտիկ, Զանգուած, Պաղդ եւ Առիւծ 15-ական, Հրանդ, Զէրբէզ, Մուրհանդակ, Սլաք, Քալաճ, Սիմարշի 10-ական, Ախուրեանց 12, Նորայր եւ Սուրէն 8-ական, Պայտ 7. 50, Երկաթ, Շանթ, Արզուման. Օժանդակ, Գիսակ, Սուրմակ, Ոսոխ, Նորեկ, Զղալ, Կայծ, Կտրիճ, Վարդ, Ցարութիւն, Քշպէշ, Գարեգին, Սեւիկ, Պողպատ, Ծիծեռնակ, Անիւ, Կիւրշի, Սաղանչաք, Ալթանեան, Աստաեանց եւ մի Քանիսը միասին 5-ական, Ծ. Հ. 4, Ցուլ, Սոնիկ, Վազգէն, Գարուն, Պայպուռ 3-ական, Զալլաղ 1, Եզնիկեան խմբ. 50, Ախուրեան խմբ. 30, Բարթուղեան խմբ. 30, Լճակի Սարեկ խ. 4. 80, Սահմանի Ծիրայր խ. 4. 45: Աղօտի հանգանակութեան ընդհանուր գումար 454 ռուբլի 75 կոպէկ:

№ 471. Արշարունիքի տեղ. կամ. 16. 40 ռուբլի, № 472. Պ. Գ.-ի հարսանիքին հանգանակած 16. 75, № 473. Մի խումբ գիւղացիներից՝ սպայ Ա. Լ.-ի ձեռամբ 3. 85:

Ընդհանուր գումար մինչեւ 1-ը օգոստոս 1902 թ. 3728 ռուբլի 19 կոպէկ:

ԴԱՒԱՀԱՆԳՕՅՑԻ ՎԵՐՋ. ԿՕՄԻՏԷՆ՝

ԱՊԱՍՏԱՆի „Դարիք“ խմբից օր. Ե.-ի Վշտանդրութեան արթիւ 25 ռուբլի, „Հաւիկեանք“ խ. 16, Սարգիս Աստուրեան 1: Գումար 42 ռուբլի:

ԱՊԱՌԱԺԻ ԿՕՄԻՏԷՆ՝

Մնացորդ 1901 թւից 19. 60 ռուբլի, 1902 յունուար. Ցնոնածառից 135. 12, մարտ. ոյժ 100, կոկոն 50, Գործակատար 60, ապրիլ. հանգանակուած 6, հանգանակութիւն Զատկին 77, Դաշնամուր 10, Տիկիս 7½, մայիս. Փարոս 30, Նեցուկ 50, հանգանակուած Թ.-ի միջոցով 10, Զան Գիւլիումից 129. 87, յունիս. Զանգիից 64. 50, Մարգանից 30, հանգանակութիւն 2. 80, յուլիս. Պ. Ս. 100, Կ. 100, Թ. 50, Մ. 90, տիկ. Ա. 50, Ոյժ 200, Գործակատար 50, երեկոյթից 100: Գումար 1516 ռ. 52 կ.:

ՎՐԷԺԻ ԿԵԴՐ. ԿՕՄԻՏԷՆ՝

Նիկոլայ Ի. 20 թումանեան, Ղ. Ն.-ից Գէազ 60, Գէազի անդամավճարներից 65, Պետրոս 55: Գումար 200 թուման:

ՈՍԿԱՆԱՊԱՏԻ ԿՕՄԻՏԷՆ՝

„Ալիշան“ եւ „Ալիք“ խմբերի երեկոյթից 200 ռուբլի, „Ազատ“ խմբ. անդամավճար 10, Ի.-ից ապառիկ 10, գրքերից 4, հին ապառիկ 1. 48, կիրակնակի կերպով 13, վիճակախաղից 203, „Սերոբ-Աղբիւր“ խմբ. 29, „Ոսոն“ խմբ. անդամավճար 12, „Վազգ“ խմբ. 14. 75, նէր Վազգից 1. 50, երեկոյթից մնացորդ 3, գրքերից 16. 50, Ք.-ից ապառիկ 100, Զանգից անդամավճար 35, նէր Զանգից 5, „Հաւատ“ խմբ. 70, „Պետռ“ խմբ. 50, ընդհանուր գրադարանութիւնից 25, յետ ստացած էլէնից 205, մի խմբից 1300, „Վազգէն“ խմբ. 22. 50: Գումար 2330 ռ. 73 կոպ.:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿԵԴՐ. ԿՕՄԻՏԷՆ՝

„Կրակոտ“ խ. Վարդահեկան, „Ցնորք“ խ. 25, Փաղանգեխ 12, „Կրակոտ“ խ. 17, նոյն 17, նոյն 20, „Թաթուլ“ խ. 30, „Հայրենասէր“ խ. 30, Պուխ 10, „Արծրունի“ խ. 30, „Հիւսիսային“ խ. 20, „Թաթուլ“ խ. 30, Բարունակ 20, „Ազատ“ խ. 12, Նանեան 10, Սէյրաթ 10, „Նորակազմ“ խ. 20, „Ծայր“ խ. 40, ՇԱՆԹ գ.-ի խմբ. 25, ՍԱՍՈՒՆԻՔ գ.-ի խմբ. 20, ԱՑՆՏԵՂ գ.-ի „Քնար“ խ. 10, ԲԱԶ գ.-ի „Շերանգ“ խ. 10, ԲԻՒՐԱԿՆ գ.-ի խմբ. 5, ՈՒՂԱՅՈՒՄ խմբ. 300, ՈՒՇՏՈՒՆԻՔԻ Կարմիր գ.-ի ենթակոմիտէն 80. Ակնոյտ 108, Անիբիւր 40, ԼՕԷՁ-ի Խնձոր գ.-ի Պողոս-պետրոս 100, ՊՈՒՐՂՈՒ գ.-ի խ. 200, ԵՐԿԱԹ գ.-ի խ. 40, ԼԵՌՆԱՌԱՇՏ Մացառ գ.-ի „Զորեղ“ խ. 22, ՇԱՆԹ գ.-ի „Կայծակ“ խ. 28, ՋՐՊԱԽ գ.-ի խմբ. 100: Գումար 1478 դահեկան:

Խմբագրութեան դիմել հետեւեալ հասցէով՝

Rédaction du „Droschak“, Genève (Suisse)